

# Դեղի ռեստիցիդների կրծատում՝

... իրականացնելով «Լավագույն  
գյուղատնտեսական պրակտիկան»  
Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի  
երկրներում



Hamburg, 2004



# Դեպի պեստիցիոների կրծատում՝

• • • իրականացնելով «Լավագույն  
գյուղատնտեսական պրակտիկան»  
Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի  
երկրներում

.....

**Hamburg, 2004**

## Բովանդակություն

1.Ներածություն .....	4
2. Ավանդական հողագործություն .....	5
2.1 «Գյուղատնտեսության բարենպաստ պրակտիկա» /GAP/ .....	6
Ցանկ .....	7
EPPO-ի «Բույսերի պաշտպանության հաջող պրակտիկայի» սկզբունքները .....	7
Կոմերցիոն «Գյուղատնտեսական բարենպաստ պրակտիկան» .....	8
2.2 «Հողագործության բարենպաստ պրակտիկա» .....	8
Աղ. 1. GFP-ի բաղադրամասերը .....	9
Ցուցակ .....	10
2.3. Խաչաձև կատարում /համաձայնեցում/ .....	10
2.4.«Ինտեգրված հողագործություն /IF/, «Մշակաբույսերի ինտեգրված կառավարում» և «Վնասատուների ինտեգրված կառավարում» /ICM և IPM/ .....	11
Աղ. 2. Կոմերցիոն ICM-ի տակ գտնվող գյուղատնտեսական հողերի գնահատականը Եվրոպական անդամ պետություններում /1995-1998/ .....	14
3.Օրգանական հողագործություն .....	14
Ինչ է օրգանական հողագործությունը .....	14
Աղ.3. Օրգանականի վերաբերյալ տարրեր ստանդարտների համեմատությունը .....	16
4.Շարժվելով պեստիցիդների կոճատման ուղղությամբ .....	18
Ինչու է անհրաժեշտ կրծատել պեստիցիդների օգտագործումը .....	19
4.1. Պեստիցիդների օգտագործման անհաջող պրակտիկան Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում .....	20
4.2. Լավագույն գյուղատնտեսական պրակտիկան /BAP/ .....	21
Աղ.4. Բույսերի պաշտպանության անհաջող, բարենպաստ և լավագույն պրակտիկաների, անհրաժեշտ քաղաքականության միջամտությունների և համապատասխան քաղաքականության միջոցների պարզաբանման օրինակներ .....	23
4.3. «Անհաջող պրակտիկայից» դեպի «բարենպաստ պրակտիկա» .....	24
Պեստիցիդների օգտագործման և բաշխման վերահսկում .....	24
«Գյուղատնտեսական բարենպաստ պրակտիկայի» /GAP/, «Բույսերի պաշտպանության հաջող պրակտիկայի» կողեքսների զարգացումը և խթանումը .....	25
Ֆերմերների լիցենզիան .....	25
Սրսկիչ հին սարքավորումների փոխարինում .....	25
Սրսկիչ սարքերի լիցենզավորում և վերահսկում .....	25
Պեստիցիդների և տարաների ոչնչացման համակարգը .....	25
4.4. «Բարենպաստից» դեպի «լավագույնը» .....	25
«Մշակաբույսերի ինտեգրված կառավարման» /ICM/ և «Վնասատուների ինտեգրված կառավարման» /IPM/ ստանդարտների հետազոտությունը և իրականացումը .....	26
Ֆերմայի խորհրդատուի լիցենզիա .....	26
Պարարտանյութերի քիչ օգտագործմամբ և պեստիցիդներից ազատ հողագործության խթանումը .....	27
4.5. Ավանդականից դեպի օրգանական .....	27
5. Պահանջներ Եվրոպական մակարդակով .....	28

## 1.Ներածություն

Քաղաքական փոփոխությունը, որ տեղի ունեցավ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում 15 տարի առաջ, խորը ազդեցություն ունեցավ գյուղատնտեսության վրա: Կենտրոնացված պլանային տնտեսությունը կործանվեց, զարգացավ շուկայական տնտեսությունը: Պետական կոլեկտիվ տնտեսությունները և արդյունաբերությունը փլուզվեցին և սեփականաշնորհվեցին: Անցումային շրջանում գյուղատնտեսական արտադրությունը ծայրահեղորեն նվազեց, նշանակալի չափով կրծատվեցին ներդրումները:

Որոշ երկրներում, օր՝ Ռումինիայում և Բուլղարիայում, գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհումը և քաղաքաներում բարձր գործազրկությունը հանգեցրին մարդկանց գաղթին քաղաքներից դեպի գյուղական բնակավայրեր: Ստեղծվեցին միլիոնավոր մանր ֆերմաներ, որոնց կիսապահով տնտեսություններն աջակցեցին պետական բյուջեին և մեծ չափով կանխեցին սովոր և քաղցր: Որոշ երկրներում իրավիճակն այլ է: Օր՝

Լեհաստանում կոմունիստական շրջանում էլ հողը մասնավորի ձեռքում էր, այժմ նույնպես գերիշխում է փոքր չափերի ֆերմերությունը: Չեխիայի Հանրապետությունում այժմ գյուղատնտեսական հողերի 76 %-ը մշակում են 500 հա հողատարածք ունեցող ֆերմերները:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում մանր գյուղացիական տնտեսությունների սեփականատերերից շատերը պողոֆեսիոնալ ֆերմերներ չեն: Կոմունիստական կարգերի օրոք նրանք կատարել են գյուղատնտեսության հետ ոչ մի առնչություն չունեցող աշխատանքներ, նրանցից շատերն այժմ տարիքն առաջ մարդկի են: Անբավարար կրթությունը և շրջակա միջավայրի մասին քիչ իրազեկությունը հանգեցնում է գյուղատնտեսական սխալ պրակտիկաների: Եթե նույնիսկ 1 հա-ի համար օգտագործվող պեստիցիդի քանակը արևմտաեվրոպական երկրների համեմատ ցածր է, առողջության և շրջակա միջավայրի վրա այդ փոքր քանակի ազդեցությունը կարող է ավելի մեծ լինել: Պեստիցիդների ոչ ճիշտ օգտագործումը, անօրինական առևտուրը, հաճախ չպիտակավորված պեստիցիդները վտանգում են ֆերմերների առողջությունը և նրանց շրջակա միջավայրը: Պեստիցիդների անօրինական առևտուրի չափերի վերաբերյալ տվյալների բացակայությունը, ինչպես նաև սննդում, հողում և ջրում պեստիցիդների մնացորդների մասին հաճախ տվյալների անմատչելիությունը թույլ չեն տալիս կատարել հաճապատասխան դատողություններ:

Անդամագրումը Եվրոմիությանն այս տարի և 2007թ.-ին կրկին խորը ազդեցություն կրողնի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների գյուղատնտեսության վրա: Գյուղատնտեսական արտադրությունն, հավանաբար, կուժեղանա շրջակա միջավայրի և գյուղատնտեսության զարգացման համար բացասական հետևանքներով հանդերձ: Այնուամենայիկ, Եվրոպական «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության» (CAP) ներկայիս բարեփոխումը, հատկապես պետական խորհրդատվական ծառայության, խաչաձև կատարման/համաձայնեցման պահանջները և գյուղերի ու օրգանական հողագործության զարգացման համար նախատեսվող ավելի շատ ֆոնդերը լավ հնարավորություն են ընձեռում «սխալ գյուղատնտեսական պրակտիկան» ճիշտ և լավագույն պրակտիկայով փոխարինելու համար:

Չնայած անդամագրումը Եվրոմիությանը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի որոշ երկրների գյուղատնտեսության կայուն զարգացման հնարավորություն է ընձեռում, այն դեռևս այդ երկրներից պահանջում է քաղաքական հեռատեսություն և պարտավորվածություն: «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության» միջոցների, պեստիցիդների վերաբերյալ Եվրոմիության քաղաքականության բացրողումների ու թերակատարումների, նաև «արևմտյան» գյուղատնտեսության հասկացությունների մասին գիտելիքներն անհրաժեշտ են հետազոտման արդյունաբերական հողագործությունից խուսափելու համար: Ոչ կառավարական

կազմակերպությունները լիազորված են ազդելու ազգային և Եվրոպական քաղաքականության վրա և ստիպելու որոշումներ կայացնողներին գնալ պեստիցիդների կրծատման և գյուղատնտեսության կայուն զարգացման ձանապարհով։ Այդ պատճառով «Պեստիցիդների դեմ գործողությունների ցանցը» (PAN) ձգտում է ուժեղացնել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հասարակական կազմակերպությունների իրավունակությունը պեստիցիդների գծով քաղաքականության և դրա միջոցների մասին տեղեկատվության լայն ընդգրկման միջոցով։ Այս բրոշյուրը, ինչներ, չի սահմանափակվում միայն Եվրոպական ապագա անդամ պետություններով։ Նշված հասկացությունները և քաղաքական պահանջները կիրառելի են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներում։

Բրոշյուրը ներկայացնում է մի ամփոփ տեսություն այնպիսի տարբեր հասկացությունների մասին, ինչպիսիք են «Բարենպաստ գյուղատնտեսական պրակտիկան» և «Մշակաբույսերի ինտեգրված կառավարումը», որոնք մշակվել են ավանդական հողագործությունն ավելի կայուն դարձնելու համար։ Ֆերմերներին «սխալ պրակտիկայից» հեռու պահելու և լավագույն պրակտիկան առաջարկելու համար բրոշյուրում ներկայացված է «Լավագույն գյուղատնտեսական պրակտիկան» որպես պեստիցիդների կրծատման և կայուն գյուղատնտեսության մասին տեսություն։ Բրոշյուրում պարզաբանված է օրգանական հողագործությունը որպես այլընտրանքային արտադրողական համակարգ, ավելի մեծ չափով է ընդգծված դրան անցնելու անհրաժեշտությունը։

## 2. Ավանդական հողագործություն

Ավանդական հողագործությունը սովորական Եվրոպական հասկացողությամբ նշանակում է մեծ քանակությամբ պարարտանյութերի օգտագործմամբ /արդյունաբերականացված/ գյուղատնտեսություն, որտեղ հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է քարձը բերքատվության, արդյունավետության և շահութաբերության վրա։ Ուժեղացումը, մասնագիտացումը և կենտրոնացումը այն հասկացություններն են, որոնց շնորհիվ կարելի է ապահովել շահութաբերություն։ Այս ամենի արդյունքում առաջացել են շրջակա միջավայրի այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են ջրի աղտոտումը պարարտանյութերով և պեստիցիդներով, բնական միջավայրի և կեսազանազանության կորուստը։ Դրանք ունեցել են նաև սոցիալ-տնտեսական հետևանքներ, օր.՝ «Գյուղական բնակավայրերից հեռացումը» և դրամատիկորեն նվազող արտադրական գները։ Նկարում պատկերված է ֆերմաների քանակի նվազումը 5 արևմտաԵվրոպական երկրներում սկսած 1979/80թթ.-ից /Եվրովիճակագրություն, 2002/։

Ավանդական հողագործությունն այս ըմբռնմամբ Եվրոպայում և ԱՄՆ-ում լայն չափերով զարգացավ 1945թ.-ից հետո, իսկ հարավում՝ 70-ականներին տեղի ունեցած այսպես կոչված «կանաչ հեղափոխության» հետ կապված։ Ավանդական հողագործության բացասական կողմնակի ազդեցությունները հանգեցրին այնպիսի նոր հասկացությունների և քաղաքականության միջոցների ի հայտ գալուն, ինչպիսին են՝ «Գյուղատնտեսության բարենպաստ պրակտիկա» /GAP/, «Հողագործության բարենպաստ պրակտիկա» /GFP/, «Խաչաձև կատարում/համաձայնեցում», «Բույսերի պաշտպանության հաջող պրակտիկա», «Խնտեգրված գյուղատնտեսություն», «Խնտեգրված արտադրություն» /IP/, «Մշակաբույսերի ինտեգրված կառավարում» /ICM/, «Վնասատուների ինտեգրված կառավարում» /IPM/։ Բոլոր այս հասկացությունների համար գիտնականները, շահույթ չի հետապնդող կազմակերպությունները, նաև կոմերցիոն կազմակերպությունները և մանրածախ առևտուր իրականացնողները հրատարակել են մեծ քանակությամբ սահմանումներ և դեկավար հրահանգներ։ Այս հասկացություններից շատերը կարող են օգտագործվել փոխարինաբար, որոշ հասկացություններ էլ՝ նպաստել մեկ այլ հասկացության ստեղծմանը։

Նկար 1-ը ներկայացնում է «Ինտեգրված հողագործական համակարգերի» /IFS/ և «Վնասատուների ինտեգրված կառավարման» փոխարարերությունը: «Ինտեգրված գյուղատնտեսություն», «Ինտեգրված արտադրություն», «Ինտեգրված հողագործական համակարգեր» հասկացությունները կարող են օգտագործվել փոխարինաբար, քանի որ դրանք ներկայացնում են ամբողջական տնտեսության նկատմամբ մի մոտեցում, որտեղ յուրաքանչյուր մասնավոր ծեռնարկություն ինտեգրված է մյուսներին՝ փոխադարձ գործողությունների միջոցով շահույթ ստանալու նպատակով: «Մշակաբույսերի ինտեգրված կառավարումը» /ICM/ և «Վնասատուների ինտեգրված կառավարումը» /IPM/ «Ինտեգրված հողագործական համակարգերի» /IFS/ բաղադրիչ մասերն են: «Գյուղատնտեսության բարենպաստ պրակտիկա» /GAP/, «Հողագործության բարենպաստ պրակտիկա» /GFP/ և «Բույսերի պաշտպանության հաջող պրակտիկա» /GPP/ կոնցեպցիաները կարող են ներառել «Ինտեգրված հողագործական համակարգերը», «Մշակաբույսերի ինտեգրված կառավարումը» և «Վնասատուների ինտեգրված կառավարումը», բայց մինչ այժմ գոյություն չունի ընդհանուր կամ օրինականորեն պարտավորեցնող սահմանում այս հասկացությունների համար: Հաջորդ գլուխներում նկարագրված են այս կոնցեպցիաներից մի քանիսը՝ որոշ օրինակներով հանդերձ:

## 2.1 «Գյուղատնտեսության բարենպաստ պրակտիկա» /GAP/

Ավելի լայն սահմանմամբ այս պրակտիկան կիրառում է շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական կայունության վերաբերյալ առաջարկությունները և մատչելի գիտելիքները ֆերմայում ընթացող արտադրության և ետարտադրական գործընթացների համար՝ արդյունքում ունենալով անվտանգ առողջ սնունդ և ոչ սննդային գյուղատնտեսական մթերքներ /FAO, 2004/:

Սովորաբար, GAP հասկացությունը վերաբերում է նպատակային խնդիրներին: ՄԱԿ-ի «Սննդի և գյուղատնտեսության կազմակերպությունը» /FAO/ օրինակի համար «Գյուղատնտեսության բարենպաստ պրակտիկան» սահմանել է պեստիցիդների օգտագործման տեսակետից: Դա ներառում է պաշտոնապես առաջարկված կամ համապետականորեն թույլատրված պեստիցիդների օգտագործումը վնասատուների արդյունավետ և հուսալի վերահսկման համար անհրաժեշտ արդիական այսմաններում: Այն ներառում է պեստիցիդների օգտագործման մակարդաչափերի մի շարք, որի կիրառումից հետո մնում է մնացորդայի պեստիցիդ, որն ամենափոքր թույլատրելի քանակությունն է /FAO, 2003/: Այս «ամենափոքր թույլատրելի քանակությունը» պեստիցիդի մնացորդը, որը մնացել է մշակված մթերքի մեջ GAP-ի կիրառումից հետո, հիմք է ծառայում պեստիցիդի օրեկան օգտագործման չափը հաշվարկելու և, վերջին հաշվով, առավելագույն մնացորդային մակարդաչափերը /MRL/ որոշելու համար: GAP-ի վերաբերյալ FAO-ի սահմանումը կարելի է անվանել նաև «ներկայիս գյուղատնտեսական պրակտիկա», որովհետև այն ուղղակի ներկայացնում է ազգային օրենսդրությունը: Նույնիսկ եթե բարձր կիրառման չափերով պեստիցիդների օգտագործումը թույլատրվում է պետականորեն, նրանց օգտագործումը, ըստ FAO-ի, դարձյալ համարվում է «գյուղատնտեսության բարենպաստ պրակտիկա»: Այս թե ինչու, որևէ անհաջող օրենսդրություն, որը կարող է վտանգել ֆերմայի աշխատողներին կամ շրջակա միջավայրին, իր արտացոլումը չի գտել FAO-ի կողմից GAP-ի հասկացության սահմանման մեջ: Այնուամենայնիվ, FAO-ն սկսել է գոյություն ունեցող GAP-ի մոդելների քնարկման խորհրդատվական գործընթացը և ակնկալվում են GAP-ի նոր քաղաքականության հանձնարարականներ /FAO, 2004/:

Եվրոպիության մակարդակով չկա GAP հասկացության սահմանումը պեստիցիդների օգտագործման տեսակետից, բայց այն հիմք է համարվում առավելագույն

մակարդաչափերի հաշվարկման համար: Բացի այդ, Եվրոմիությունը պահանջում է պեստիցիդների ճիշտ օգտագործում: «Ճիշտ օգտագործումը», ըստ Եվրոմիության, ներառում է GAP-ի կիրառումը, բայց Եվրոմիությանը դեռևս չի հաջողվում ներկայացնել որևէ սահմանում և օրենսդրություն, որն այդ սահմանումը դարձնի պարտավորեցնող: Թե ինչպես կարող են GAP-ի սկզբունքները նպաստել շրջակա միջավայրի պաշտպանությանը, ցույց է տրված Եվրոմիության «Նիտրատի մասին 91/676 դիրեկտիվում»: Վերջինս պահանջում է, որ պետությունները սահմանեն «Գյուղատնտեսության բարենպաստ պրակտիկայի» կողեքսը պարարտանյութերի օգտագործման վերաբերյալ՝ հիմնվելով Հավելում 2-ում նշված որոշակի պայմանների վրա: Դիրեկտիվով պահանջվում է նաև ծրագիր նկարագրված կողեքսի իրականացման համար /EC, 1991a/:

Պեստիցիդների օգտագործման առումով «Գյուղատնտեսության բարենպաստ պրակտիկայի» ավելի ճշգրիտ սահմանում տվել է Բույսերի պաշտպանության Եվրոպական և Միջերկրածովյան կազմակերպությունը /EPPO/: Սա միջկառավարական կազմակերպություն է, որի կազմի մեջ մտնում են բույսերի պաշտպանության ազգային գործակալություններ: EPPO-ի մշակած GAP-ի հասկացությունը կոչվում է «Բույսերի պաշտպանության հաջող պրակտիկա» /GPP/: Այն ընդգրկում է ընդհանուր սկզբունքներ /տես ցանկը/, ինչպես նաև Եվրոպական և միջերկրածովյան տարածաշրջանի մոտ 30 մշակաբույսերի համար հատուկ դեկավար հրահանգներ: «Բույսերի պաշտպանության հաջող պրակտիկայի» վերաբերյալ EPPO-ի դեկավար հրահանգները նախատեսված են բույսերի պաշտպանության ազգային կազմակերպությունների կողմից օգտագործման համար որպես դեկավար մարմինների, որոնք պատասխանատու են բույսերի պաշտպանիչ մթերքների օգտագործման համար: Հրահանգները նախատեսված են նաև դրա հետ առնչվող խորհրդատվական ծառայությունների օգտագործման համար: EPPO-ն դեկավար մարմինն է, որը կարող է ազդել ազգային դեկավար հրահանգների վրա: EPPO-ի տարածաշրջանի յուրաքանչյուր հիմնական մշակաբույսի համար դեկավար հրահանգները ներառում են վնասատուների, ախտածինների և մոլախոտերի վերահսկման մեթոդները, մանրամասներ կենսաբանության և զարգացման վերաբերյալ, նկարագրված է համապատասխան վերահսկման ռազմավարությունը, բերված են քիմիական վերահսկման նպատակով օգտագործվող ակտիվ նյութերի օրինակներ: Որպես կառավարական կազմակերպությունների գլխավոր մարմին, զարմանալի չէ, որ EPPO-ն շատ քննադատորեն չի վերաբերվում գրանցված քիմիկատներին, ավելին, առաջարկում է օգտագործել ծայրահեղ թունավոր պեստիցիդներ, հերբիցիդներ և աճի կարգավորիչներ:

## Ցանկ EPPO-ի «Բույսերի պաշտպանության հաջող պրակտիկայի» սկզբունքները

- 1.Մշակաբույսերի գործոնները և մշակման վերահսկումը
- 2.Վնասատուների տեղական սպեկտրը և գործողությունների սկիզբը
- 3.Բույսերի պաշտպանիչ նյութերի գրանցված օգտագործման պայմանները
- 4.Ակտիվ բաղադրամասերի ընտրությունը
- 5.Զարգացման ընտրությունը
- 6.Օգտագործման քանակը, ժամանակացույցը և հաճախականությունը
- 7.Օգտագործման սարքավորումները և մեթոդները
- 8.Վերահսկման կենսաբանական միջոցները
- 9.Սահմանված կողմնակի ազդեցությունները

10.Հակագդեցությունը

11.Անվտանգությունը

12.Ուսուցումը և փաստաթղթերով հիմնավորումը:

## Կոմերցիոն «Գյուղատնտեսական բարենպաստ պրակտիկան»

Եվրոմիության անդամ պետություններում ֆերմերները, սննդի արդյունաբերության և սննդի մանրածախ առևտուր իրականացնողները աճող հետաքրքրություն են դրսկորում սեփական GAP-ը ստեղծելու կամ տնտեսությունում որակի հավաստիացման համակարգ ստեղծելու նկատմամբ, որը սպառողներին կիավաստիացնի այն մասին, որ սննդամթերքներն աճեցվել են պեստիցիդների պակաս կամ նվազագույն քանակի օգտագործմամբ:

«Եվրոպական մանրածախ ապրանքների աշխատանքային խումբը» /EUREP/, օրինակի համար, մշակել է ստանդարտների և ընթացակարգերի մի լրակազմ միրգ և բանջարեղեն արտադրող այն ֆերմերներին ստուգելու և հավաստագրելու համար, ովքեր իրականացնում են EUREP-ի «Գյուղատնտեսության բարենպաստ պրակտիկան»:

EUREP GAP նախաձեռնությունը նորմատիվային փաստաթղթերի շարք է, որը հարմար է միջազգային հավաստագրման օրենքներին հավաստարմագրվելու համար: Այս փաստաթղթերի մշակմանը մասնակցել են ներկայացուցչներ աշխարհի տարբեր ծայրերից: Նրանք ստեղծել են մարտահրավեր նետող մի արձանագրություն, որն արտադրողի ուշադրությունը կենտրոնացնում է այն հիմնական հարցերի վրա, որոնք պետք է լուծվեն գյուղատնտեսական աշխատանքների բոլոր փուլերում: EUREP-ի համար GAP-ը միջոց է «Վճառատունների ինտեգրված կառավարման» և «Մշակաբույսերի ինտեգրված կառավարման» պրակտիկաները կոմերցիոն գյուղատնտեսական արտադրության շրջանակներում միավորելու համար: EUREP-ի անդամները նշված պրակտիկաների ընդունումը կարևոր են համարում գյուղատնտեսական արտադրության երկարատև բարելավման և կայունության համար:

Սուտ 3600 ֆերմեր ընդգրկող /նոտ 211.000հա/ «Երաշխավորված ապրանքների համակարգը» /APS/ Միացյալ Թագավորությունում միրգ և բանջարեղեն շուկա արտահանող կազմակերպություն է, EUREP GAP-ի անդամ, որն ընդհանուր արձանագրությունից բացի մշակել է նաև հատուկ հրահանգներ GAP-ի համար՝ ներառելով վնասատուների և հիվանդությունների առանձնահատուկ IPM/ICM միջոցառումներ: «Գյուղատնտեսության բարենպաստ պրակտիկա» հասկացությունից բացի կա նաև «Հողագործության բարենպաստ պրակտիկա» կոնցեպցիա:

## 2.2 «Հողագործության բարենպաստ պրակտիկա»

Այս տեքմինն առաջին անգամ ի հայտ է եկել ագրո-շրջակա միջավայրի թիվ 2078/92/EC որոշման իրականացմամբ/ Եվրոպայի «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության» /CAP/ Սարցերիի բարեփոխումից հետո 1992թ-ին: Ըստ Եվրոպայի Հանձնաժողովի / EC/«Հողագործության բարենպաստ պրակտիկան» ընդգրկում է կարգավորող ստանդարտների պահպանումը և հոգատարության դրսկորումը:

«Որպես նվազագույն պահանջ» ֆերմերները պետք է հարգեն շրջակա միջավայրի պահպանման ընդհանուր պահանջները առանց հատուկ վճարումներ ստանալու: Սա նշանակում է, որ բոլոր ֆերմերները պետք է հետևեն պեստիցիդների, պարարտանյութերի, ջրի օգտագործման պարտադիր օրենքներին, և, որտեղ հարմար է՝ հողագործության բարենպաստ պրակտիկայի վերաբերյալ ազգային կամ տարածաշրջանային դեկավար հրահանգներին / EC, 2000a/: Եվրոմիության

1999թ.«Գյուղական զարգացման մասին որոշումը» /RDR/ «Հողագործության բարենպաստ պրակտիկան» /GFP/ սահմանում է որպես հողագործության ստանդարտ, որին պետք է հետևի յուրաքանչյուր պատասխանատու ֆերմեր համապատասխան շրջանում/ EU, 2002a/:

GFP-ն շատ կարևոր է Եվրոպայի «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության» մեջ: Այսուսակ 1-ում ցույց են տրված GFP-ի հնարավոր բաղադրամասերը;

## Աղ. 1. GFP-ի բաղադրամասերը

Մակարդակը	Իրավական հիմքը	Սովորական, այսինքն ընդունված հողագործական բարենպաստ պրակտիկան ի հավելումն օրենսդրության
Եվրոմիություն	Եվրոմիության Շրջակա միջավայրի, գյուղատնտեսության, սննդի մասին օրենսդրությունը /Նիտրատի մասին հրահանգը, Պեստիցիդների թույլտվության մասին հրահանգը, Սննդային մնացորդների, Թափոնների, Զրային կառույցների մասին հրահանգները և այլն/	
Ազգային	Օրենսդրություն շրջակա միջավայրի, գյուղատնտեսության, սննդի մասին /Բույսերի պաշտպանության, Զրի պաշտպանության, Բնության պաշտպանության օրենքներ և այլն/	Չափանիշների կատալոգ /Բույսերի հաջող պաշտպանության պրակտիկայի սկզբունքները, Պարարտանյութերի հաջող կառավարում, Բուժքերային գոտիներ/
Տարածաշրջանային	Լրացուցիչ տարածաշրջանային օրենսդրություն, օր.՝ ֆեղերալ նահանգներում, դեպարտամենտներում	Տարածաշրջանային ղեկավար հրահանգներ
Տեղական	Լրացուցիչ տեղական օրենսդրություն /Կոնսերվացիայի մասին որոշում, Զրային պաշտպանության գոտիներ, Բնական միջավայրի պաշտպանություն/	Տեղական սահմանումներ /IPM/-ը մրգատու այգիների տարածքներում, օր.՝ Տիրոլում, Ալտես Լանդում, Համբուրգում, Բուլғարիայում, և այլն/

«Հողագործության բարենպաստ պրակտիկա» /GFP/ հասկացությունը մտցված է «Ընդհանուր գյուղատնտեսության քաղաքականության» երկրորդ սյունակում, «Գյուղական զարգացման մասին» 1257/1999 որոշման, ինչպես նաև Ռումինիայում և Բուլղարիայում գյուղատնտեսության և գյուղական զարգացման համար հատուկ օգնության ծրագրերում /SAPARD/: Այն ծառայում է որպես հիմք ագրո-շրջակա միջավայրի ծրագրերի աջակցության համար «Գյուղական զարգացման համար» որոշման ներքո: Անդամ պետությունները պետք է սահմանեն ստուգման ենթակա ստանդարտներ ագրո-շրջակա միջավայրի պլաններում «Հողագործության բարենպաստ պրակտիկայի» կատարման,

վերահսկման և պակաս նպաստավոր տարածքների /LFA/ աջակցության համար: Այս ստանդարտները պետք է ծայրահեղ դեպքում ներկայացնեն շրջակա միջավայրի ընդհանուր պարտադիր պահանջների կատարումը /EU, 1999a/:

Սա նշանակում է, որ ագրո-շրջակա միջավայրի ծրագրերը պետք է GFP-ից առաջ անցնեն, և անդամ պետությունները պետք է առանձին սահմանեն և ստանդարտացնեն

«Հողագործության բարենպաստ պրակտիկան» նախքան որևէ տարածաշրջանում որևէ ծրագիր սկսելը: Անդամ պետությունները կարող են իրենց հայեցողությամբ վերահսկել GFP-ի կատարումը: Նրանցից պահանջվում է ստուգել աջակցություն ստացող ֆերմաներից ամենաքիչը 5 %-ին:

Ներկայում չկա որևէ փաստաթուղթ, որը ներկայացնի «Հողագործության բարենպաստ պրակտիկայի» ազգային պահանջների և GFP-ի կիրառման տարբեր մակարդաշափեր ունեցող տարածքների ամփոփ տեսությունը Եվրոպական 15+10 երկրներում: Ինչևէ, Գերմանիայի Ֆեդերալ գյուղատնտեսական հետազոտության կենտրոնը /FAL/ և Եվրոպայի Շրջակա միջավայրի քաղաքականության ինստիտուտը /IEEP/ մի շարք օրինակներ եմ կազմել անդամագրված երկրների համար GFP-ի առումով /տես ցուցակը/:

## Ցուցակ

Բուլղարական GFP-ն հիմնականում վերաբերում է ջրի աղտոտմանը, հողի պլուաբերությանը և պահպանման համար նախատեսված վայրերին: Ստուգման ենթակա որոշ ստանդարտներ ներառում են պեստիցիդների պահպանումը և ոչնչացումը գետաբերանից, առվակից, լճից, ջրամբարից կամ ծովափից 20մ հեռավորության վրա, և, անասնագոմերի կամ պարարտանյութերի պահպանման շինությունների կառուցումը գետաբերանից, առվակից, լճից, ջրամբարից կամ ծովափից 20մ հեռավորության վրա: Լեհական GFP-ն ընդգրկում է 30 պահանջ և պարտականություն: Ներկայում ֆերմերների մոտ 5%-ը կատարում է այդ պրակտիկան /IEEP, 2003/:

Չեխական GFP-ն /կրծատ/ հետևյալն է՝

- իրականացնել բնական ռեսուրսների վերաբերյալ օրենսդրությունը
- չտնկել լայն շարքեր պահանջող մշակաբույսեր, ինչպես օր.՝ եղիպտացորեն, բազուկ կամ կարտոֆիլ ուղղաձիգ թեքությունների վրա: Հարկավոր է նախաձեռնել կոնտուրային մշակումներ և փոխադրամիջոցներ:
- չերկել մարզագետինը վարելահողի վերածելու նպատակով բարձր ջրային ինֆիլտրացիա/ներսփռում/ և թեքություններ ունեցող գոտիներում
- գյուղատնտեսական հողի վրա գտնվող մարզագետինները հնձել տարեկան ամենաքիչը 1 անգամ, իսկ մարզագետինները, որտեղ ընդունված է 2 հունձքը, տարեկան հնձել 2 անգամ /FAL, 2003/:

Գյուղական գարգացման քաղաքականությունը մինչև 2005թ. կուժեղացվի, որպեսզի ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեն ավելի առողջ շրջակա միջավայրի, որակյալ մթերքի և կենդանիների բարեկեցության համար և օգնեն ֆերմերներին կատարելու Եվրոպական նշած արտադրական ստանդարտները /EC, 2003a/:

## 2.3. Խաչածն կատարում /համաձայնեցում/

Ագրո-շրջակա միջավայրի ծրագրերը լավ միջոց են տարածաշրջանում շրջակա միջավայրի բարելավման հասնելու և առանձին ֆերմերների պրակտիկան փոխելու համար, բայց սա վերաբերում է միայն այն ֆերմերներին, ովքեր մասնակցում են այդ ծրագրերին: «Խաչածն կատարում/համաձայնեցում» հասկացությունը հնարավորություն ունի ազդելու «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության» /CAP/ վճարումներ ստացող բոլոր ֆերմերների հողագործական պրակտիկաների վրա:

Ապագայում CAP-ի վճարումները ֆերմերներին կապված կլինեն շրջակա միջավայրի, սննդի անվտանգության, կենդանիների և բույսերի առողջության և կենդանիների բարեկեցության ստանդարտների հետ, ինչպես նաև ամբողջ տնտեսությունը գյուղատնտեսության և շրջակա միջավայրի առումով լավ պայմաններում պահելու պահանջի հետ /EC, 2003b/: Եվրոհանձնաժողովի 1783/2003 որոշման հոդված 3-ը, որտեղ շարադրված են ուղղակի օգնության սխեմաները, նշում է. «ֆերմերը, որն ուղղակի վճարում է ստանում, պետք է հարգի օրենքով սահմանված կառավարման պահանջները, որոնք նշված են հավելում 3-ում, համաձայն նույն հավելումում ֆիքսված ժամանակացույցի և հոդված 5-ում հաստատված գյուղատնտեսական և շրջակա միջավայրի պայմանների:

2. Իրավասու ազգային մարմինը պետք է ֆերմերին ապահովի օրենքով սահմանված կառավարման պահանջների և գյուղատնտեսության ու շրջակա միջավայրի համար նորմալ պայմանների ցանկով»:

«Օրենքով սահմանված կառավարման պահանջները» վերաբերում են Եվրոհանձնաժողովի 18 դիրեկտիվներին, որոնք կոչված են պաշտպանելու շրջակա միջավայրը, երաշխավորելու մարդկանց առողջությունը և կենդանիների բարեկեցությունը: Այս ցանկում ներառված է Եվրոհանձնաժողովի Խորհրդի 91/414 որոշումը պեստիցիդների թույլատրության մասին, սակայն չեն նշված «Զրային կառուցների մասին դիրեկտիվը», «Խմելու ջրի մասին 98/83 դիրեկտիվը» և սննդում պեստիցիդների առավելագույն մնացորդային մակարդաչափերը կարգավորող որեւէ դիրեկտիվ /EC, 2003c/:

Այնուամենայնիվ, «խաչածն կատարման/համաձայնեցման» մեթոդը հարկադրական միջոց է: Այն երաշխավորում է, որ ֆերմերներն արտադրում են «լավ», այսինքն օրինական մակարդակով, բայց չի դնում այդ լավ մակարդակից ավելի առաջ գնալու պահանջ: Բավական հետաքրքիր է այն, որ այս մեթոդը չի օգտագործում «Հողագործության բարենպաստ պրակտիկա» տերմինը «օրենքով սահմանված կառավարման պահանջների նկարագրության համար և թվում է, ակնհայտ պատճառ չկա այդ տերմինները միմյանցից առանձնացնելու համար: Ինչևէ, GFP-ի նվազագույն ստանդարտները պահանջում են գոյություն ունեցող որոշման իրականացում, ինչպես որ պահանջում է «խաչածն կատարում/համաձայնեցումը»:

## 2.4. «Հնտեգրված հողագործություն /IF/, «Մշակաբույսերի հնտեգրված կառավարում» և «Վնասատուների հնտեգրված կառավարում» /ICM և IPM/

«Մշակաբույսերի հնտեգրված կառավարումը», ինչպես ցույց է տրված նկ. 1-ում, «Հնտեգրված հողագործության համակարգերի» /IFS/նի մասն է կազմում: Սա մի մոտեցում է, որն ընդգրկում է ամբողջ ֆերման՝ կենդանիների և մշակաբույսերի արտադրությունը: Այս բրոշյուրում IF-ը, IFS-ը, ICM-ը կօգտագործվեն փոխարինաբար, եթե ուշադրության կենտրոնում կինեն պեստիցիդները և մշակաբույսերի արտադրությունը:

«Վնասատուների հնտեգրված կառավարումը» /IPM/ կարող է լինել ICM-ի հնտեգրալ մաս, դրանք իրենց սահմանամբ հավասարագոր չեն, որովհետև մեկն ուշադրությունը կենտրոնացնում է վնասատուների, իսկ մյուսը՝ մշակաբույսերի վրա, բայց տնտեսության մակարդակով տարբերությունները կարող են վերանալ:

ICM կիրառող ֆերմերը հնարավոր է, որ վնասատուների կառավարման մեջ հնտություն ունենա: Ինտենսիվ հողագործության համակարգերում, որտեղ չի կատարվում մշակաբույսերի շատ ցանքափոխություն, ինչպես օր.՝ խաղողի և մրգատու այգիների, նաև ծաղկի արտադրության և ջերմոցային արտադրության համակարգերն են, IPM-ն ավելի մեծ դեր է կատարում, քան ICM-ը: Մշակաբույսերի ցանքափոխության նեղ ժամանակամիջոցը

և սահմանափակ գյուղատնտեսական տարածքը նվազեցնում են ICM-ի հնարավորությունները:

Սա, անշուշտ, կախված է սահմանումից, և, GAP-ի ու GFP-ի նման, այստեղ էլ չկա եզակի վավերացված սահմանում ICM –ի և IPM-ի համար: Բացուան և Կողանը /2004/ կազմել են IPM-ի 29 տարբեր սահմանումներ, որոնք առանձին-առանձին գործածության մեջ էին մտել 1990-1998թթ: Այս սահմանումներից շատերը ընդհանուր քիչ կետեր ունեին: Դրանք ուշադրությունը կենտրոնացնում էին վնասատուների հսկողության վրա վնասատուների կանխման և մշակման, կենսաբանական, քիմիական և/կամ տեխնիկական միջոցների ինտեգրման միջոցով հաշվի առնելով շրջակա միջավայրի զգայունակությունը և օգտագործելով որոշում կայացնելու գործընթացները: Ինչևէ, IPM-ը միջոց է վնասատուների վերահսկման համար, մինչդեռ ICM-ն ավելի ամբողջական միջոց է, որը նույնպես կենտրոնում է պահում սնուցիչ կառավարումը և ամբողջ ագրո-էկոհամակարգը: Ըստ FAO-ի, «Վնասատուների ինտեգրված կառավարումը» /IPM/ նշանակում է վնասատուների վերահսկման բոլոր միջոցների ուշադիր նկատառումը և այնուհետև համապատասխան միջոցների ինտեգրումը, որոնք խանգարում են վնասատուների պոպուլյացիաների զարգացմանը և պահում են պեստիցիդները և այլ միջամտությունները այնպիսի մակարդաշափերի վրա, որոնք տնտեսապես արդարացված են և նվազեցնում են մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգը: IPM-ը շեշտում է առողջ մշակաբույսերի աճի անհրաժեշտությունը ագրո-էկոհամակարգերի հնարավոր նվազագույն քայլքայնամբ և խրախուսում է վնասատուների վերահսկման բնական մեխանիզմները: Մի շարք սահմանումներ կան նաև ICM-ի և IF-ի համար: Անենից կատարյալ և առաջադիմական սահմանումներից մեկը մշակել է «Վնասակար կենդանիների և բույսերի կենսաբանական և ինտեգրված վերահսկման միջազգային կազմակերպությունը» /IOBC/: Վերջինիս համար ինտեգրված արտադրությունը «հողագործական համակարգ է, որն արտադրում է բարձրորակ սնունդ և այլ մթերքներ՝ օգտագործելով բնական ռեսուրսները և կարգավորող մեխանիզմները աղտոտիչ ներմուծվող նյութերը /պարարտանյութերը փոխարինելու և կայուն հողագործություն ապահովելու համար»: Հիմնական շեշտը դրվում է համակարգերի նկատմամբ ամբողջական մոտեցման վրա՝ ներգրավելով ամբողջ տնտեսությունը որպես հիմնական միավոր, ագրո-էկոհամակարգերի կենտրոնական դերի, հավասարակշռված սննդարար ցիկլերի և կենդանի հնվենտարի բոլոր տեսակների բարեկեցության վրա: Հողի պտղաբերությունը և բազմազան շրջակա միջավայրի պահպանումը և բարելավումը կարևոր բաղադրամասեր են: Կենսաբանական, տեխնիկական և քիմիական մեթոդները հավասարակշռվում են զգուշորեն՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի պաշտպանությունը, շահութաբերությունը և սոցիալական պահանջները»:

Բնական ռեսուրսների և կարգավորող մեխանիզմների ինտեգրումը հողագործական աշխատանքներին՝ ֆերմայից դուրս արտադրվող պարարտանյութերի առավելագույն փոխարինման հասնելու համար, հասկացության հիմնական խնդիրներից մեկն է:

Մշակաբույսերի վերաբերյալ հատուկ հրահանգում IOBC-ը պարզորոշ արգելում է որոշ պեստիցիդների, նաև որոշ քիմիական դասերի օգտագործումը: Օր.՝ խնձորի արտադրության համար հրահանգում շարադրված է. «Զի թույլատրվում հողի քիմիական մանրէազերծում»:(...) Ընտրված կուլտիվարը պետք է ապահովի լավ հեռանկարներ տնտեսական հաջողության համար ագրո-քիմիկատների նվազագույն օգտագործմամբ: Օր.՝ «գոլդեն» տեսակի խնձորը չպետք է աձեցնել այնպիսի վայրերում, որոնք հարմար են դեղնա-դարչնագույն սորտի համար, ոչ էլ «ջոնագոլդ» տեսակը պատրի գույնի և ամրության համար անբարենպաստ վայրերում: Նախընտրելի են հիվանդությունների և/կամ վնասատուների նկատմամբ դիմացկուն կուլտիվարները: Տնկանյութը պետք է լինի առողջ և հավաստագրված որպես վիրուսից ազատ»:

«Զի թույլատրվում մրգատու այգիների ամբողջ դատարկ հողատարածքի կառավարումը: Հնարավորության դեպքում, որտեղ չափազանց ուժեղ է աճը, չետք է օգտագործել հերթիցիդներ: Մոլախոտերից ազատ հողաշերտը պետք է պահպանել ցանքածածկ գցելով կամ հողի մակերեսը ծածկելով կամ մեխանիկական մշակմամբ: Հերթիցիդները, որոնք թույլատրված են «Ինտեգրված մրգային արտադրության մեջ», կարող են օգտագործվել միայն մոլախոտերի վերահսկման մեթոդներին փոխարինելու համար» (IOBC, 2002):

Որոշ անդամ պետություններ, օր.՝ Ավստրիան, Բելգիան և Իսպանիան, ICM/IF-ի սահմանումը տվել են հիմնվելով IOBC-ի վրա: Այլ անդամ պետություններ, օր.՝ Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան և Լյուքսեմբուրգը, ICM/IF-ի սահմանման հիմքում դրել են EISA-ի սահմանումը: EISA-ն հիմնականում արդյունաբերական և ագրոքիմիական արդյունաբերության ներկայացուցիչների կազմակերպություն է: Այդ պատճառով EISA-ի կողեքսը ինտեգրված հողագործության մասին բավական ընդհանուր է, իսկ ինչ վերաբերում է մշակաբույսերի պաշտպանությանը, այն «Բույսերի պաշտպանության Եվրոպական և Միջերկրածովյան կազմակերպության» «Բույսերի պաշտպանության հաջող պրակտիկայից» հեռու չի գնում: Իրականում դա նման է բույսերի պաշտպանության հաջող մասնագիտական պրակտիկայի վերաբերյալ Գերմանիայի առաջարկություններին: Հետևաբար, մշակաբույսերի վերաբերյալ հատուկ հրահանգները EISA-ի կողմից չեն մշակվել:

«Մշակաբույսերի ինտեգրված կառավարման» / ICM / խորը վերլուծությունը Եվրոպի կատարվել է Եվրոպական համար 2002թ.: Վերլուծությունը վերաբերել է 10 ICM համակարգերի ազդեցությանը շրջակա միջավայրի և տնտեսության վրա՝ համեմատած ավանդական համակարգերի հետ: Պետական մացորդները հողում պակասեցվել են և նկատելի են դրական ազդեցությունները կենսազանագույնության վրա: Դժվար է եղել գնահատել տնտեսության վրա ունեցած ազդեցությունը;

Արտադրության փոփոխական ծախսերը կրծատված պարարտանյութերի շնորհիվ ցածր են եղել, բայց որոշ դեպքերում այլ ծախսեր, հատկապես կառավարման համար, եղել են ավելացած: Բերքի գնահատումը ցույց է տվել, որ ICM-ի կիրառման դեպքում բերքն ավելի ցածր է եղել, քան ավանդական համակարգերում, բայց հետագա զարգացումը կարող է ավանդական եղանակով արտադրության հետ համեմատելի արդյունք տալ: Հակառակ օրգանական հողագործության, հավաստագրված ICM մթերքի համար հավելավճար չկա, և ցածր արդյունքը չի փոխաստուցվում: Այնուամենայնիվ, ICM-ը կարող է ավանդական հողագործության նման շահութաբեր լինել, միայն թե դրա համար շատ հետազոտություններ է հարկավոր կատարել: Զի կատարվել ICM-ի արտաքին դրամական ծախսերի համեմատություն ավանդական հողագործությունից ծագող ծախսերի հետ, բայց շրջակա միջավայրի աշխատանքների ավելի լավ կատարման շնորհիվ, ICM-ին առնչվող արտաքին ծախսերը հավանաբար ցածր են: Հաջորդ աղյուսակը ցույց է տալիս, որ ICM համկարգերը անդամ պետությունների մեջ մասում տեղին չեն կամ չեն եղել:

Եվրոպի միջին՝ 2,7 %-ը /1995-1998 ժամանակահատվածի համար/ միայն 0,7%-ով է ավել 1998թ. օրգանական հողագործության տարածքի միջինից: Այնուամենայնիվ, այս թվերը զգուշորեն պետք է մեկնաբանել: Թվերը ներկայացնում են հավաստագրված ICM ֆերմերներին և բացառում են այն ֆերմերներին, ովքեր հնարավոր են, որ կրառում են «Մշակաբույսերի ինտեգրված կառավարում», բայց հավաստագրված չեն:

## Աղ. 2. Կոմերցիոն ICM-ի տակ գտնվող գյուղատնտեսական հողերի գնահատականը Եվրոմիության անդամ պետություններում /1995-1998/

ICM-ի տարածքը /հեկտար/	Օգտագործված ընդհանուր գյուղատնտեսական տարածքը /հեկտար/	ICM-ը որպես օգտագործված ընդհանուր գյուղատնտեսական տարածքի համամասնություն

Այսուսակից երևում է, որ Ավստրիայում, Դանիայում և Միացյալ Թագավորությունում ICM-ի արտադրությունը ավելի մեծ տարածներ է ընդգրկում: Ավստրիայում Հարավային Տիրող՝ ընդարձակ մրգատու տարածաշրջանը, ունի «Վնասատուների ինտեգրված կառավարման» երկարատև ավանդույթ և աջակացություն է ստացել Ավստրիայի ագրո-շրջակա միջավայրի OPUL ծրագրից:

Եվրոհանձնաժողովի «Գյուղական զարգացման մասին» 1257/1999 որոշման հրականացման շնորհիվ, Եվրոպայում, հավանաբար, աճել են ICM տարածքները, բայց եթե նույնիսկ հաշվի առնենք, որ միջին տարածքը կրկնապատկվել կամ եռապատկվել է մինչ այժմ, երկրների մեծ մասում տոկոսային հարաբերությունը դեռևս շատ փոքր է:

### 3.Օրգանական հողագործություն ինչ է օրգանական հողագործությունը

Օրգանական հողագործությունը տարբերվում է հողագործական այլ համակարգերից մի շարք առումներով: Այն բարերար ազդեցություն է թողնում վերականգնման ենթակա ռեսուլսների և կրկնաշրջանառության վրա՝ հողին վերադարձնելով սննդարար նյութերը, որոնք հայտնաբերվում են թափոնների մեջ: Ինչ վերաբերում է կենդանի ինվենտարին, մսի և թռչնամսի արտադրությունը կարգավորվում է առանձնահատուկ ուշադրությամբ՝ օգտագործելով բնական սննդամթերքներ: Օրգանական հողագործությունը կարևորում է շրջակա միջավայրի համակարգերը վնասատուների և հիվանդությունների վերահսկման նպատակով՝ մշակաբույսերի և անասունների աճեցման ժամանակ և խուսափում է սինթետիկ պեստիցիդների, հերբիցիդների, քիմիական պարարտանյութերի, աճի հորմոնների, հակաբիոտիկների օգտագործումց: Փոխարենը օրգանական հողագործությամբ զբաղվող ֆերմերներն օգտագործում են միջոցների մի շարք, որն օգնում է պահպանել էկոհամակարգերը և նվազեցնել աղտոտվածությունը /Եվրոմիություն, Գյուղատնտեսության վեբսայթ/:

GAP, GFT, IPM և ICM հասկացությունները որոշ չափով ռիսկային կառավարում են համարվում ավանդական գյուղատնտեսության մեջ, իսկ օրգանական հողագործությունն իսկական այլընտրանք է: Դեռևս 20-րդ դարի սկզբներից մշակվել էին գյուղատնտեսական արտադրության այլընտրանքային մեթոդներ, հիմնականում Հյուսիսային Եվրոպայում: Երեք երկրներում երեք կարևոր շարժումներ ծագեցին, որոնց արդյունքում Գերմանիայում ի հայտ եկավ կենսադինամիկ գյուղանտեսությունը, Անգլիայում առաջացավ օրգանական հողագործությունը, իսկ Շվեյցարիայում զարգացավ կենսաբանական գյուղատնտեսությունը: Չնայած շեշտադրման որոշ տարբերություններին, բոլոր այս շարժումների համար ընդհանուր է այն, որ դրանք ընդգծում են հողագործության և բնության միջև եղած գլխավոր կապը և նպաստում են բնական հավասարակշռության պահպանմանը: Ֆերմերներն իրենց հեռու են պահում հողագործության նկատմամբ

միջամտական մոտեցումից, որն առավելագույնի է հասցնում արդյունքը տարբեր տեսակի սինթետիկ մթերքների օգտագործման միջոցով:

Օրգանական հողագործությունը, ինչևէ, պարարտանյութեր չօգտագործող հողագործություն չէ, ֆերմերները, ովքեր չեն օգտագործում սինթետիկ ապրանքներ, ինքնին օրգանական ֆերմերներ չեն: Օրգանական հողագործությունը գիտելիքների վրա հիմնված կառավարման համակարգ է: Սննդի և գյուղատնտեսության կազմակերպությունը /FAO/-ի «Կողեքս ալիմենտարիուսը» /CAC/ սահմանում է «Օրգանական գյուղատնտեսությունը ամբողջական արտադրության կառավարման համակարգ է, որը խթանում է ագրոէկոհամակարգի առողջությունը՝ ներառյալ կենսազանազանությունը, կենսաբանական ցիկլերը և հողի կենսաբանական ակտիվությունը: Այն ընդգծում է կառավարման պրակտիկաների օգտագործումը ի հակադրություն ֆերմայից դուրս արտադրված պարարտանյութերի, հաշվի առնելով, որ տարածաշրջանային պայմանները պահանջում են տեղային հարմարեցված համակարգեր: Սա բարդանում է մշակման, կենսաբանական և մեխանիկական մեթոդների օգտագործմանը ի հակադրություն սինթետիկ նյութերի օգտագործման՝ համակարգի ներսում որևէ առանձնահատուկ ֆունկցիայի հրականացման համար»:

Պատմականորեն, օրգանական գյուղատնտեսությունը երկրորդական դեր է կատարել Եվրոպայում մինչև ուշ 1980-ականները, բայց շրջակա միջավայրի հիմնախնդիրները և սննդի հետ կապված սկանդալները, որ ծագել էին ավանդական գյուղատնտեսության մեջ, հանգեցրին այն բանին, որ քաղաքականությունը սկսեց աջակցել օրգանական հողագործությանը, մասնավորապես ագրո-շրջակա միջավայրի և գյուղական զարգացման միջոցառումների համատեքստում: Քաղաքականությունն աջակցում է օրգանական հողագործությանը, որովհետև այն համարվում է շրջակա միջավայրի և հասարակության համար նպաստավոր համակարգ: Այն օժանդակություն է ստանում նաև որպես նոր ծնված արտադրություն, որն ընդլայնում է սպառողների ընտրությունը և հնարավորությունը է տալիս արտադրությանը զարգանալու մինչև այն կետը, երբ այն ի վհճակի կլինի լինել անկախ և նրգակցել հաստատված շուկաներում և դրամական ներդրում ներ կատարել գյուղական զարգացման մեջ:

Տարբեր երկրներում ֆինանսական օժանդակությունը հիմնավորապես տարբեր է: 2000թ. կոնվերսիոն դրամաշնորհային օգնությունը եղել է 180 Եվրո /միջինը/ Գերմանիայում, 440Եվրո՝ Ֆինլանդիայում: Ակնկալվում է, որ «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության» /CAP/ բարեփոխման հետագա իրականացման հետ մեկտեղ օրգանական հողագործությունն ավելի մեծ աջակցություն կստանա: «Գյուղական զարգացման մասին որոշմանը» հնարավոր է օժանդակել օրգանական հողագործությանը տարբեր ճանապարհներով սուբսիդիաների տրամադրմանը՝ ագրո-շրջակա միջավայրի շրագեր, ներդրումներ, մարքեթինգային օգնություն, տարածաշրջանային զարգացում և ցուցադրական ֆերմաներ:

Վերջին տարիներին օրգանական հողագործությունն ընդարձակվել է՝ Եվրոմիությունում 2001թ. վերջին կազմելով գյուղատնտեսական հողատարածքի 3,24 տոկոսը /4,44 մլն հա 142.348 հողակտորների վրա/:

Չնայած երկրների մեծ մասն ապրում էր արագ աճի ժամանակաշրջան, համընդիանուր աճի տեմպը Եվրոպայում համեմատաբար կայուն է՝ տարեկան 20-25 տոկոս,

Գերմանիան և Արևելյան Եվրոպայի երկրները համարվում էին աճի կենտրոններ:

Պատմական աճի տեմպերի հիման վրա օրգանական հողագործությունը կարող է ակնկալել, որ մինչև 2010թ. այն կկազմի Եվրոպայի գյուղատնտեսության 10-20 տոկոսը՝ կախված տնտեսական, օրենսդրական և շրջակա միջավայրի քաղաքականության զարգացումներից, որոնք հիմք են ապահովել վերջին աճի համար, հատկապես սկսած 1990-ականների կեսերից:

## Դեպի պեստիցիդների կրծատում

Հաջորդ պատկերում ցույց է տրված օրգանական արտադրությամբ գյուղատնտեսական հողերի տոկոսային հարաբերությունը 29 Եվրոպական երկրներում համաձայն 2003թ. փետրվարին կատարած ուսումնասիրության: Դիագրամից երևում է, որ երկրների միջև տարբերությունը մեծ է: Լիխտենշտեյնում և Ավստրիայում օրգանական հողագործությունն անցնում է 10 տոկոս սահմանագիծը, մինչդեռ երկուների մեծ մասում օրգանական հողագործությունը դեռևս ցածր է 2 տոկոս սահմանագիծից:

Օրգանական ֆերմերի կարգավիճակ և հետևաբար հավելավճար ստանալու համար ֆերմերները պետք է հավաստագրվեն՝ համաձայն առանձնահատուկ ստանդարտների: Մինչև 1990-ականների սկիզբը մասնավոր կազմակերպությունները մշակել էին ստանդարտներ օրգանական արտադրության, տեսչական հսկողության և հավաստագրման համար: Այդ ժամանակվանից կառավարությունները հանձ են առել այդ առաջադրանքը: Եվրոմիության Խորհրդի 2092/91 որոշումը օրգանական արտադրության մասին և 1804/99 որոշումը կարգավորում են օրգանական արտադրությունը և օրգանական եղանակով արտադրվող սնունդը:

Համաշխարհային մակարդակով «Կողեքս ալիմենտարիուս» սահմանում է կառավարությունների համար ընդհանուր միջազգային սկզբունքը: Ամենից կարևոր հասարակական կազմակերպություններից մեկը, որը սահմանում է ստանդարտներ և հավատարմագրում է հավաստագրողներին աշխարհի մասշտաբով, «Օրգանական գյուղատնտեսության շարժումների միջազգային ֆեդերացիան է» /IFOAM/, որն ունի 750 անդամ 100 երկրում:

Հաջորդ այլուսակը ցույց է տալիս համեմատությունը IFOAM-ի ստանդարտների, «Կողեքս ալիմենտարիուս»-ի /CAC/ դեկավար հրահանգներ և Եվրոմիության որոշումների միջև:

## Աղ.3. Օրգանականի վերաբերյալ տարբեր ստանդարտների համեմատությունը

Նյութերը	IFOAM-ի 2002թ. հիմնական ստանդարտները / IFOAM-ի «Օրգանական արտադրության և մշակման նորմերը» վիաստաթղթի մի մասը	«Կողեքս ալիմենտարիուսի» օրգանականի վերաբերյալ դեկավար հրահանգները 1999/2001	Եվրոմիության 2092/91 որոշումը /և փոփոխությունները/ և 1804/99 որոշումը «Օրգանական եղանակով արտադրված մթեքների մասին»
Նպատակը/սահմանները/	Սնունդ և ոչ սնունդ, ներառյալ ձկնեղենը, տեքստիլը	Հիմնականում սնունդը	Սնունդը և ոչ սնունդը
Կոնվերսիան	Ներման կամ ֆերմայի միավորը, նվազագույնը 1 տարի բերքահավաքից առաջ, բազմամյա մշակաբույսերը-2 տարի	Ֆերման կամ ֆերմայի միավորը, նվազագույնը 2 տարի բերքահավաքից առաջ, բազմամյա մշակաբույսերը - 3 տարի	Ֆերման կամ ֆերմայի միավորը, նվազագույնը 2 տարի բերքահավաքից առաջ, բազմամյա մշակաբույսերը - 3 տարի
Պարարտացում	Համեմատելի	Համեմատելի	Համեմատելի

## Դեպի պեստիցիդների կրծատում

	Նմանատիպ ցանկ, պարզ չափանիշների ցանկ նոր պարարտանյութերի վերաբերյալ	Նմանատիպ ցանկ, գործարանային հողագործությունից ստացված պարարտանյութի բացառում	ցանկեր, պարարտանյութը՝ միայն էքստենսիվ հողագործությունից ստացված
Վնասատումների և հիվանդությունների վերահսկում	Նմանատիպ ցանկ	Նմանատիպ ցանկ	Նմանատիպ ցանկ
Գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների մթերքներ	Բացառվում է	Բացառվում է	Բացառվում է
Կենդանական ինվենտար	Բավական մանրամասն մշակված որպես հենք պետական կազմակերպությունն երի համար	Մշակված ավելի շատ որպես հենք ազգային մարմինների համար	Շատ մանրամասն կարգավորում, հատկապես ընտանի թռչունների համար
Մշակում	Մանրակրկիտ մշակված չափանիշների ցանկ նոր հավելումների և մշակող միջոցների համար, մանրամասն ցուցակ	Չափանիշների ցանկ, կենդանական մթերքների համար շատ սահմանափակ ցանկ	Քիչ են մշակված չափանիշները, դեռևս չկա կենդանական մթերքների ցանկը
Պիտակավորում	Կոնվերսիոն պիտակ՝ թույլատրված 2-րդ տարուց հետո: Խառը մթերքներ, 95 % -ից ավելի օրգանականով՝ լրիվ պիտակավորում; 70% մթերքներ, ընդգծվում է պիտակավորում; 70% ից քիչ մաս կազմող մթերքների դեպքում՝ միայն բաղադրանյութերի ցանկի պիտակավորում	Կոնվերսիոն պիտակ՝ թույլատրված 2-րդ տարուց հետո: Խառը մթերքներ, 95 % -ից ավելի օրգանականով՝ լրիվ պիտակավորու մ; 70% մթերքներ, բաղադրանյութ երի ցանկի պիտակավորու մ՝ թույլատրված միայն ազգային մակարդակով	Կոնվերսիոն պիտակ՝ թույլատրված 2-րդ տարուց հետո: Խառը մթերքներ, 95 % -ից ավելի օրգանականով՝ լրիվ պիտակավորում; 70% մթերքներ, բաղադրանյութերի ցանկի պիտակավորում

Այսուսակից երևում է, որ այնքան էլ շատ տարբերություններ չկան 3 ստանդարտների միջև։ Պեստիցիդների օգտագործումը, որոշ արտոնություններով հանդերձ, արգելված է։ Օրգանական եղանակով աճեցրած մշակաբույսերի մեծ մասի համար պեստիցիդներ

բոլորովին չեն օգտագործվում: Մշակաբույսերի ցանքափոխության լայն ժամանակամիջոցները և դիմացկուն տեսակները պեստիցիդների կիրառումը դարձնում են ավելորդ:

Բազմամյա մշակաբույսերի դեպքում, ինչպիսին մրգերն ու խաղողն է, օրգանական եղանակ կիրառող պտղաբույժները դեռևս կախում ունեն աղնձի միացություններից սնկային հիվանդությունների վերահսկման առումով, որոնք ջրային օրգանիզմների համար իրենց բարձր թունայնության և հողում կուտակվելու պատճառով շրջակա միջավայրի համար խնդիր են համարվում: Ինչեւ, 2002թ-ից ի վեր աղնձի օգտագործումը սահմանափակվել է մինչև 31.12.05 մինչև ընդամենը 8կգ/հա, այնուհետև մինչև Եվրոպի կողմանը տարին՝ մինչև 6կգ/հա:

## 4. Շարժվելով պեստիցիդների կրծատման ուղղությամբ

Այս բրոշյուրի նախորդ գլուխներում նկարագրված են մի շարք հասկացություններ, որոնց շնորհիվ հնարավոր է նվազեցնել ավանդական հողագործության կողմնակի բացասական ազդեցությունները: Տրված է նաև օրգանական հողագործության բնութագիրը որպես այլընտրանքային արտադրության համակարգ: Հաջորդ գլուխների նպատակն է ցույց տալ պեստիցիդների օգտագործման հետ կապված հիմնախնդիրները, հատկապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, և անհրաժեշտ քայլերը պեստիցիդների կրծատման ուղղությամբ:

Կրծատել պեստիցիդների օգտագործումը նշանակում է կրծատել կողմնակի ազդեցությունները, վտանգները և պեստիցիդների օգտագործման հետ կապված պոտենցիալ վտանգը: Դա նաև նշանակում է նվազեցնել քիմիական կախվածության չափը: Արևմտյան Եվրոպայի ֆերմերները պեստիցիդներից ավելի ու ավելի շատ են կախվածության մեջ հայտնվում և հաճախ բողոքում են, որ չեն կարողանում աճեցնել որոշակի բույսեր առանց պեստիցիդների: Պեստիցիդների կրծատումը, հետևաբար, պետք է նպաստի նաև կախվածության շղթայի թուլացմանը: Վտանգի և կախվածության կրծատման հնարավոր չեն հասնել միայն քանակի կրծատմամբ: Օր.՝ աղնձի միացությունները մեծ չափերով օգտագործվում են սնկային հիվանդությունների վերահսկման համար, բայց դրանք որպես սննդային մնացորդ ոչ մի դեր չեն խաղում և համարվում են մարդու առողջության համար ոչ թունավոր: Եթե ֆերմերը աղնձից անցնի սինթետիկ սնկասպան նյութերի, ինչպես օր.՝ դիթիոկարբամիտներն են, նա կնվազեցնի քանակը, բայց վտանգը չի վերանա: Դիթիոկարբամիտները, հատկապես Մանեք խմբի պեստիցիդները, սննդում ամենից հաճախ հանդիպող պեստիցիդներ են, որոնք համարվում են հնարավոր քաղցկեղածիններ:

Մշակման հաճախականությունը /TF/, նշանակված չափաքանակով օգտագործումների թիվը նպատակային խնդիր է համարվում Դանիայում, մինչդեռ Շվեդիայում և Հոլանդիայում թիրախն են համարվում շրջակա միջավայրի և/կամ առողջության համար վտանգները: Ստորև նշված ցուցակից երևում են կրծատման ենթակա թիրախները և ձեռք բերած կրծատումները 4 երկրներում: Արդյունքները ցույց են տալիս, որ այս 4 երկրներում պեստիցիդների կրծատումը տարիներ շարունակ հաջողությամբ է ընթացել /PAN Europe, 2003a/:

Երկիրը	Ժամանակաշրջանը	Կրծատման թիրախը	Չեռք բերած կրծատումները
Դանիա	1987-1997	50%օգտագործ./ակտիվ բաղադրանյութերի քանակ 50% TF /մինչև 1.34/ /իհմք՝ 1981-1985/	47%օգտագործ./ակտիվ բաղադրանյութերի քանակ 8% TF /մինչև 2,45/

Դեպի պեստիցիդների կրծատում

	2000-2002  2004-2009	TF-ը 2.0-ից պակաս  TF= 1,7	TF-ը 2,04 / 59% օգտագործում/ակտիվ բաղադրանյութերի քանակ/
Շվեդիա	1986-1990	50%օգտագործ./ակտիվ բաղադրանյութերի քանակ /իհմք`1981-1985/	49% գտագործ./ակտիվ բաղադրանյութերի քանակ
	1991-1996	75%օգտագործ./ակտիվ բաղադրանյութերի քանակ	64%օգտագործ./ակտիվ բաղադրանյութերի քանակ
	1997-2001	Օգտագործումը նպատակային խնդիր չէ, բայց խնդիր է վտանգների կրծատումը՝ արտահայտված շրջակա միջավայրի և մարդու առողջության ցուցիչներով	63% շրջակա միջավայրի ռիսկի ցուցիչի համար /2000/
Հոլանդիա	1990/91-2000	50%օգտագործ./ակտիվ բաղադրանյութերի քանակ /իհմք`1984-1988/	43%օգտագործ./ակտիվ բաղադրանյութերի քանակ
	2004-2010	75%-ով վտանգի կրծատում մինչև 2005թ. և 95%-ով՝ մինչև 2010 /իհմք`1998/	
Նորվեգիա	1985-1996	Կրծատել օգտագործումը մինչև ապահովության աստիճան	54% օգտագործման կրծատում
	1998-2002	25% վտանգի կրծատում	Նորվեգական ռիսկի ցուցիչները ցույց են տվել մարդու առողջության և շրջակա միջավայրի վտանգների կրծատում համապատասխանաբար 33% և 37%

**Ինչու է անհրաժեշտ կրծատել պեստիցիդների  
օգտագործումը**

«Հարյուրավոր, եթե ոչ հազարավոր արդյունաբերական քիմիկատներ, ներառյալ պեստիցիդները, շարունակում են գոյություն ունենալ շրջակա միջավայրում: Ժամանակի ընթացքում կուտակվելով, լուրջ վտանգ են ներկայացնում մեր առողջության համար: Օդում, ջրում, սննդում, սպառողական մթերքներում և շինություններում կուտակված աղտոտիչների ազդեցությունը նշանակալի չափով նպաստում է ասթմայի, ալերգիաների, նեյրո-թունավորման, որոշ տեսակի քաղցկեղների և ինունային ընկճվածության: Ավելին, մենք լավ չենք պատկերացնում աղտոտիչների փոքր քանակության ազդեցությունը, որոնք կուտակվում են մեր օրգանիզմում /հաճախ դրան անվանում են «կուտեյլի» էֆեկտ/: Ավելին, որոշ ստանդարտներ հաստատվել են՝ նկատի ունենալով միջին տարիքի չափահասներին, առանց հաշվի առնելու հասարակության այնպիսի խոցելի խմբերի պաշտպանության անհրաժեշտությունը, ինչպիսին երեխաներն ու ծերունիներն են: Իրավիճակը պահանջում է, որ մենք նորովի ուշադրություն դարձնենք շրջական միջավայր - առողջություն հարցերին» /Եվրոհանձնաժողով, 2001թ/:

#### 4.1. Պեստիցիդների օգտագործման անհաջող պրակտիկան Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում

Պեստիցիդների օգտագործումը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում Արևմտյան Եվրոպայի երկրների համեմատ համարվում է ցածր: Հետևաբար, կարծես թե կարելի է պնդել, թե պեստիցիդների կրծատումն այդ երկրների համար հիմնախնդիր չէ: Բայց սա ձշմարիտ չէ:

Ազգային միջին մեծությունների վերաբերյալ վիճակագրությանը չի հաջողվում ներկայացնել իրական պատկերը: Կան պեստիցիդների քիչ և շատ օգտագործման տարածքներ: Արևմտյան Լեհաստանում պեստիցիդների օգտագործման միջին չափը մոտ 6 կգ/հա է, որը 2,2 կգ-ով բարձր է Եվրոմիություն +15-ի միջինից /Եվրոստատիստիկա, 2002/, հարավային Լեհաստանում պեստիցիդների օգտագործումը մոտ 1,5 կգ/հա է: Ցածր և բարձր ինտենսիվությամբ տարածքների միջև տարբերությունները երկրների մեծ մասի համար չեն վերլուծվել: Ընդհանուր առմամբ, օգտագործման մասին տվյալները վստահելի չեն: Բացի այդ, անօրինական ներմուծումները և չթույլատրված պեստիցիդների օգտագործումը գլխավոր հարցեր են հատկապես Բուլղարիայի, Ռումինիայի և Ուկրաինայի համար, այդպիսի օգտագործման փաստերը չեն ընդգրկված պաշտոնական վիճակագրությունում:

Ճիշտ է, շատ ֆերմերներ պեստիցիդներ բոլորովին չեն օգտագործում, որովհետև ի վիճակի չեն գնելու դրանք, իսկ օգտագործող ֆերմերներն հաճախ ճիշտ չեն կիրառում դրանք: Հաշվետվությունը, որը տեղի է ունեցել UNDP/GEF Դանութի տարածաշրջանային ծրագրի համար, ներկայացրել է պեստիցիդների օգտագործման հարցը Արևելյան Եվրոպայի 11 Դանության երկրներում և հայտնաբերել է «պեստիցիդների անհաջող պրակտիկայի» մի շարք դեպքեր այդ տարածաշրջանում:

- Պեստիցիդների չվերահսկվող և անօրինական առևտուրը, որը հանգեցնում է ֆերմերների կողմից արգելված պեստիցիդների օգտագործմանը /օր.՝ ԴԴՏ/, շատ երկրների համար դարձել է հիմնախնդիր, չնայած, որ սա զգայուն և դժվար ստուգելի հարց է: Առանձնապես անհանգույան է այն, որ որոշ երկրներ, որտեղ բացակայում է պեստիցիդների վերահսկման արդյունավետ համակարգը /օր.՝ Ուկրաինա/, ձեռք են բերում հնացած և անօրինական մթերքների համար «դեմայինգի շուկայի» համբավ /Վնասաբեր գներով արտահանում/:
- Պեստիցիդների սխալ պահպանումը, ներառյալ ժամկետանց պեստիցիդների պահեստները, շարունակում է հիմնախնդիր մնալ շատ երկրների համար: Ուկրաինայում 20.000 տոննա հնացած պեստիցիդ է դեռևս պահպան վատ

պայմաններում՝ լուրջ վտանգ ներկայացնելով մարդու առողջության և շրջակա միջավայրի համար /օր.՝ ինֆիլտրացիան ստորերկոյա ջրերի մեջ/։ Բուլղարիայում պեստիցիդների պահեստների 35 %-ը գտնվում են անմխիթար պայմաններում։ Մոլտովայում մոտ 6000 տոննա հնացած պեստիցիդներ պահվում են նախկին խորհրդային և կոլոկտիվ տնտեսություններում, ներառյալ մինչև 4 տոննա տարողությամբ առանձին պահեստները։

- Պեստիցիդների օգտագործումն առաջարկված չափը գերազանցող քանակությամբ, մասնավորապես եգիպտացորենի մշակումը Ատրագին հերթիցիդի մինչև 2-3 անգամ գերազանցող չափաքանակով, մշտապես համարվել է լուրջ իհմնախնդիր։ Շատ դեպքերում ավել չափաքանակով մշակումը գիտելիքների պակասի և այն սխալ մտայնության հետևանք է, թե իբր ավելի մեծ քանակության օգտագործումը կմեծացնի պեստիցիդի արդյունավետությունը։
- Պեստիցիդների չթույլատրված օգտագործումը այն մշակաբույսերի նկատմամբ, որոնց համար դրանք գրանցված չեն /օր.՝ Լինդենի օգտագործումը բանջարեղենի վրա/, ընդհանուր իհմնախնդիր է երկրների մեծ մասի համար։
- Սրսկող սարքավորումների մաքրումը և չօգտագործած պեստիցիդների ոչնչացումը, պեստիցիդների տարաների և սրսկման համար նախատեսված բաքերի լվացումը ջրի աղբյուրների, օր.՝ գետերի և արհեստական լճակների մոտ կամ դրանց մեջ։
- Սրսկման ժամանակ պեստիցիդների շարժումը /հոսքը/ դեպի հարևան տարածքներ սրսկամ համար օգտագործվող հին սարքավորումների /տարածաշրջանում օգտագործվող սրսկի սարքերի մեծ մասը 15 տարուց ավել վաղեմություն ունի/, ցածր գիտելիքների և օպերատորական ուսուցման պակասի /օր.՝ սրսկումը քամոտ եղանակին/ հետևանք է։
- Գիտելիքների պակասը մակերեսային ջրերի և այլ պաշտպանության ենթակա տարածքների համար պարտադիր «բուժերային գոտիների» մասին։

Պեստիցիդների կիրառման սխալ ժամանակացույցը, որը թույլ գիտելիքների և օպերատորական ուսուցման պակասի հետևանք է, հանգեցնում է պեստիցիդի անարդյունավետ օգտագործման և աղտոտման վտանգի մեծացման։

Վերոհիշյալ օրինակները պարզորոշ ցույց են տալիս, որ պեստիցիդների օգտագործումը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ուղեկցվում է մի շարք լուրջ իհմնախնդիրներով, և պեստիցիդների կրծատումը պետք է հասցեագրված լինի։ Այս իհմնախնդիրներից զատ անդամագրումը Եվրոպիությանը, հավանաբար, կհանգեցնի զյուղատնտեսության ուժեղացմանը, այստեղից է՝ պեստիցիդների ավելի շատ օգտագործմանը։

## 4.2. Լավագույն գյուղատնտեսական պրակտիկան /BAP/

Այս հասկացությունը /BAP/ սկզբնապես ներկայացվել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի 11 Դանության երկրների ներկայացուցիչներին 2003թ. հոկտեմբերին

Զագրեբում կայացած UNDP/GEF-ի սեմինարի ժամանակ։ Դանության տարածաշրջանային ծրագրում «լավագույն գյուղատնտեսական պրակտիկա» հասկացության մշակման նպատակն էր աջակցել գյուղատնտեսական աղտոտումը վերահսկող նոր քաղաքականության նախագծմանը կենտրոնական և ավելի ցածրադիր Դանության երկրների համար, ինչպես նաև խրախուսել գյուղայուն ունեցող և նոր ի հայտ եկող ազգային օրենսդրությանը, որը կխթանի աղտոտվածության վերահսկման ավելի մեծ չափով ինտեգրմանը մշակաբույսերի, կենդանիների և գյուղատնտեսական հողերի ամենօրյա կառավարմանը։ BAP կոնցեպցիան, այդ պատճառով, GAP-ի և GFP-ի նման կոչված է դեկավարելու ավանդական հողագործության պատճառով առաջացած վնասակար ազդեցությունները և վտանգները։ Բայց այս հասկացությունների միջև մեծ

տարբերություններ կան: Ամենից առաջ, ինչպես անունն է նշում, «լավագույն գյուղատնտեսական պրալտիկան» ի վերջո առաջ է անցնում «Հողագործության բարենպաստ պրակտիկայից» /GFP/ և «Գյուղատնտեսական բարենպաստ պրակտիկայից» /GAP/, որոնք հաճախ ընդունվում են որպես «ներկայիս գյուղատնտեսական պրակտիկա»: Երկրորդ, GAP-ը և GFP-ն ուշադրությունը կենտրոնացնում են կանոնների, որոշումների և հանձնարարականների վրա, մինչդեռ BAP-ը հիմնական ուշադրությունը դարձնում է աշխատանքների հիերարխիայի /ստորակարգության/ վրա: BAP-ը պետք է դիտել որպես քայլ-առ-քայլ մոտեցում «սխալ պրակտիկայից» դեպի «բարենպաստ», դրանից էլ դեպի «լավագույն պրակտիկա» տեղական, գյուղատնտեսական, շրջակա միջավայրի, սոցիալական և տնտեսական համատեքստում: Ար. 4-ը մի օրինակ է բերում, որտեղ BAP հասկացությունը հասցեագրված է պեստիցիդների օգտագործմանը, օր.՝ բույսերի պաշտպանությանը, և անհաջող, լավ և լավագույն պրակտիկաները բաժանված են 3 գոտիների, օր.՝ մակարդակների: Կապույտ գոտին GAP-ի և GFP-ի մակարդակն է: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների առաջին գերակայություններից մեկը պետք է լինի այն, որ բոլոր ֆերմերները կարմիր գոտուց, որը ներկայացնում է անհաջող պրակտիկան, գնան դեպի կապույտ գոտի: Իրական չի կարող լինել այն, որ բոլոր ֆերմերներն այնուհետև կշարժվեն դեպի կանաչ գոտի, որը ներկայացնում է լավագույն գյուղատնտեսական պրակտիկան: Տնտեսությունների ուսումնասիրությունը, որը նախաձեռնվել էր Ռումինիայի համար GEF-ի կողմից ֆինանսավորված «Գյուղատնտեսական աղտոտման վերահսկման ծրագրի» նախապատրաստական փուլերի ընթացքում, բացահայտել է, որ մեծ մասամբ անտեսվում են «աղտոտում» կամ «շրջակա միջավայր» հասկացությունները այն պատճառով, որ բնակչության մեծ մասը այդ ծրագրի ընդգրկած տարածքում տարիքն առած և կրթություն չունեցող մարդիկ են: Այս իրավիճակն ընդհանուր է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, և, եթե այդ երկների ֆերմերներն իրականացնեն GAP/GFP, սա կլինի գլխավոր ձեռքբերումը և հավանաբար, նրանց լավագույն պրակտիկան: Մյուս կողմից, կան կրթված կոմերցիոն ֆերմերներ, որոնք կարող են ի վիճակի լինել դեպի կանաչ գոտի շարժվելու: Այս տեսանկյունից նայելով, «լավագույն պրակտիկան» կարող է նշանակալի չափով տարբերվել համաձայն՝

- գյուղատնտեսական, շրջակա միջավայրի և սոցիալ-տնտեսական համատեքստի, որում ֆերմերներն աշխատում են
- համապատասխան քաղաքականության միջոցների մատչելիությանը, որոնք խրախուսում են ֆերմերներին դեպի հիերարխիա քայլ կատարելու համար
- համապատասխան գիտելիքների և տեխնիկական միջոցների մատչելիության, որոնք աջակցում են ֆերմերներին դեպի հիերարխիա քայլ կատարելու համար:

Հաջորդ գլուխները վերաբերում են համապատասխան քաղաքականության այն միջոցներին, որոնք կխրախուսեն ֆերմերներին մեկ մակարդակից մյուսին անցնելու համար, ինչպես նաև ազգային մակարդակով ներկայացվող պահանջները:

## Աղ.4. Բույսերի պաշտպանության անհաջող, բարենպաստ և լավագույն պրակտիկաների, անհրաժեշտ քաղաքականության միջամտությունների և համապատասխան քաղաքականության միջոցների պարզաբանման օրինակներ

Տիպիկ կառավարման պրակտիկաներ /օր.՝ պեստիցիդների կառավարում/	Անհրաժեշտ քաղաքականության միջամտություն	Համապատասխան քաղաքականության միջոցների օրինակներ	
<p>«Կանաչ գոտի»՝ «բույսերի պաշտպանության լավագույն պրակտիկա» Շրջակա միջավայրի կառավարմանը պարագակ, տիկայի ավելի բարձր մակարդակ, որը շրջակա միջավայրի համար ավելի շահութաբեր է, բայց սովորաբար ֆերմերի համար ծախսատար է</p>	<p>Փոփոխություն դեպի «Մշակաբույսերի ինստեգրված կառավարում» /ICMI/ Պեստիցիդների կրծատման այլանուների նախապատրաստում Ներդրումներ պահեստների և պեստիցիդների հոսքը նվազեցնող սրսկիչ սարքավորումների գծով</p>	<p>Խթանիչներ վնասատուների կառավարման պրակտիկայի նվազագույն մակարդակը գերազանցելու համար Ազրո-շրջակա միջավայրի համար վճարումներ Կապիտալ դրամաշնորհներ ավելի լավ տեխնոլոգիայի համար Հավելավճարներ որակյալ մեերբների համար և այլն Որոշում կայացնող միջոցներ</p>	
<p>«Կապույտ գոտի»՝ «բույսերի պաշտպանության բարենպաստ պրակտիկա» Շրջակա միջավայրի կառավարման նվազագույն մակարդակ, որը հասկանալի է, որ ֆերմերը կնախաձեռնի որպես ֆերմայի կառավարման «սովորական մաս» առանց որևէ փոխհատուցման ակնկալիքի: Սա պետք է ներառի շրջակա միջավայրի օրենսդրության հարգումը, ծառայությունների խորհուրդներին հետևելը՝ հաշվի առնելով տեխնիկական առաջնաթացը և այլն;</p>	<p>Պահանջելով ավելի շատ տեղեկատվություն, կառավարման և ավելի մեծ հմտությունն եր, ավելի առաջադեմ տեխնոլոգիա ներ, և հաճախ ավելի մեծ ծախսեր</p>	<p>Պեստիցիդի պիտակի հրահանգներին հետևում: Տարաների և սրսկիչ սարքավորումների մաքրում մշակված դաշտում: Գրանցված և հարմար պեստիցիդների օգտագործում: Ճիշտ չափաբանակի և հաճախականության կիրառում</p> <p>Համապատասխան միջամտություններ շրջակա միջավայրի կառավարման պրակտիկայի նվազագույն մակարդակի գարգացման համար</p>	<p>Խորիդատվական ծառայություններ՝ կապված առաջադեմ և լավ ֆինանսավորված հետազոտական և զարգացման ծրագրերի հետ  Մասնագետների քանակի ընդլայնման միջոցներ, օր.՝ «տեղական կառավարման խմբեր»: Որոշում կայացնող միջոցներ:  «Խաչաձև կատարում/համաձայնեցում » կառավարության կողմից օժանդակ վճարումների հետ</p>

«Կարմիր գոտի»՝

Սրսկիչ գործիքների

Բացասական խթանիչներ

Օրենսդրություն ներառյալ

<p><b>«բույսերի պաշտպանության բարենպաստ պրակտիկա»</b></p> <p>Անընդունելի կառավարման պրակտիկաներ, որոնք ընդհանրապես արգելված են օրենքով</p>	<p>մաքրում մակերեսային ջրերի մեջ կամ կողղին:</p> <p>Չօգտագործած պեստիցիդների և տարամերի «վայրի ոչնչացում»:</p> <p>Չզրանցված պետիցիդների գնում և օգտագործում</p>	<p>շրջակա միջավայրի կառավարման նվազագույն մակարդակն իշեցնելու համար</p>	<p>բարելավված հարկադիր տուգանքները:</p> <p>Բույսերի հաջող պաշտպանության պրակտիկայի կողեքսը:</p> <p>Ֆինանսական տուգանքներ և այլ սանկցիաներ</p>
--	---	---	---

### 4.3. «Անհաջող պրակտիկայից» դեպի «բարենպաստ պրակտիկա»

Գլուխ 4.1-ում նկարագրված են պեստիցիդների օգտագործման մի շարք «անհաջող պրակտիկաներ» Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում: Գոյություն ունեն մի շարք մատչելի միջոցներ, որոնք ֆերմերներին կարող են ստիպել վիճակներու իրենց պրակտիկան : Այդ միջոցներից են բացասական խթանիչները, օր.՝ ֆինանսական տուգանքները, բայց դրանք կարող են ճիշտ միջոց չփոխել աղքատության եզրին գտնվող կիսաապահով ֆերմերների համար: Դրական խթանիչները, որոնք ուղեկցվում են ագրոշրջակա միջավայրի ծրագրերով, պահանջում են նորմալ հողագործություն, ուղղակի վճարումները պահանջում են նաև օրենսդրության կատարում: Խաչաձև կատարում/համաձայնեցումը և «Գյուղական գարգացման որոշումների» /RDR/ ֆոնդերը միջոցներ են միայն Եվրոմիության երկրների ֆերմերների և այն ֆերմերների համար, որոնք արդեն ստանում են այդ աջակցությունը և պետք է վախենան անօրինականորեն գործելու պարագայում այդ օգնությունից զրկվելուց: Խաչաձև կատարում/համաձայնեցումը և RDR ֆոնդերը օգտակար են միայն ֆերմերին «անհաջող պրակտիկայից» հեռու պահելու համար, եթե նրանք ծգտում են օգտվել «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության» աջակցությունից: Այնուամենայնիվ, ազգային մակարդակով կան քաղաքականության մի շարք միջոցներ, որոնք անհրաժեշտ են անհաջող պրակտիկայից դեպի բարենպաստ պրակտիկայի անցնելու համար:

### Պեստիցիդների օգտագործման և բաշխման վերահսկում

Ազգային կառավարությունները պետք է ձգտեն դադարեցնել պեստիցիդների անօրինական առևտուրը: Սահմանգծում գործող դեկավար մարմինները պետք է ուսուցանվեն պեստիցիդների անօրինական առևտուրի հարցերով: Օրենսդրությունը պետք է օգնի դեկավար մարմիններին անօրինական պեստիցիդներ վաճառողներից բարձր տուգանքներ գանձելու հարցում:

Ընդլայնման ծառայությունները և ֆերմերները պետք է ունենան անօրինական և հաճախ չպահանջվող պետիցիդների վտանգի մասին տեղեկատվություն ստանալու հնարավորություն: Այդ նպատակով առաջարկվում է ավելի լայնորեն ընդգրկել հասարակությանը: Ֆերմերներին պետք է ապահովել պարզ և հասկանալի

տեղեկատվությամբ պեստիցիդների անօրինական օգտագործման և առհասարակ պեստիցիդների ոչ ճիշտ կիրառման մասին:

Մանրածախ առևտորի խանութները, խորհրդատվական ծառայությունները և ֆերմերների հետ աշխատող այլ կազմակերպություններ կարող են ծառայել որպես տեղեկատվական նյութերի դիստրիբյուտորներ:

## «Գյուղատնտեսական բարենպաստ պրակտիկայի» /G AP /, /GFP/ և «Բույսերի պաշտպանության հաջող պրակտիկայի» կողեքսների գարգացումը և խթանումը

Ազգային կառավարությունը պետք է շարունակի գարգացնել և խթանել վերոնշյալ պրակտիկաների կողեքսները: «Բույսերի պաշտպանության հաջող պրակտիկան» պետք է լինի ստուգման ենթակա ստանդարտ GFP-ի շրջանակներում, ֆերմերները գյուղական գարգացման համար վճարումները պետք է ստանան միայն իրենց պրակտիկան բարելավելու պարագայում:

### Ֆերմերների լիցենզիան

Պեստիցիդներ օգտագործող բոլոր ֆերմերները պետք է ունենան լիցենզիա/թուլտվություն/: Լիցենզիան ձեռք բերելու համար ֆերմերները պետք է հաճախեն մատչելի դասընթացների հետևյալ թեմաների շուրջ՝

- չօգտագործած պեստիցիդների և տարաների ոչնչացում
- գրանցումների վարում /գործավարություն/

Լիցենզիաները պետք է լինեն 3 տարի ժամկետով: Եթե ֆերմերը կարողանա ապացուցել, որ ինքը հաճախել է «Մշակաբույսերի ինտեգրված կառավարման», կանխարգելիչ միջոցառումների և ոչ քիմիական այլընտրանքների վերաբերյալ 48 ժամ դասընթացների 3 տարվա ընթացքում, լիցենզիան կերկարաձգվի: Չպետք է թույլատրվի պեստիցիդների գնումն առանց լիցենզիայի:

### Սրսկիչ հին սարքավորումների փոխարինում

Կառավարության ֆոնդերը պետք է նպաստեն սրսկման հին սարքավորումները նոր, ժամանակակից սարքերով փոխարինելու համար:

### Սրսկիչ սարքերի լիցենզավորում և վերահսկում

Հարկավոր է զարգացնել և իրականացնել սրսկիչ սարքերի լիցենզավորման և վերահսկման օրենսդրությունը:

### Պեստիցիդների և տարաների ոչնչացման համակարգը

Դիստրիբյուտորներից և մանրածախ առևտորվ գբաղվողներից անհրաժեշտ է պահանջել ետ վերցնել չօգտգագործած պեստիցիդները և դատարկ տարաները: Չօգտագործած պեստիցիդները և դատարկ տարաները կարող են կրկնաշրջանառության մեջ մտնել առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու: Պետք է ուժեղացնել արդյունաբերողների պատասխանատվությունը:

## 4.4. «Բարենպաստից» դեպի «լավագույնը»

Կան նի շարք միջոցներ, որոնց օգնությամբ ֆերմերները կարող են բարենպաստ գյուղատնտեսական պրակտիկայից անցնել լավագույն պրակտիկայի: Այդ միջոցներից է ֆերմերների և խորհրդատունների ուսուցումը, «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության» /CAP/ կողմից ֆինանսավորվող ազրո-շրջակա միջավայրի ծրագրերը, ինչպես նաև մասնավոր անձանց կազմակերպած որակի հավաստման

համակարգերը խիստ պահանջների ներկայացմամբ: «Մշակաբույսերի ինտեգրված կառավարման» կոնկրետ սահմանումը և իրականացումը, բարձրագույն կրթությամբ խորհրդատունների ծառայությունը և պարարտանյութերի քիչ օգտագործմամբ և պեստիցիդներից ազատ հողագործության խթանումը պետք է լինեն «Լավագույն հողագործական պրակտիկայի» ստանդարտները:

## «Մշակաբույսերի ինտեգրված կառավարման» /ICM/ և «Վնասատուների ինտեգրված կառավարման» /IPM/ ստանդարտների հետազոտությունը և իրականացումը

Կառավարությունները պետք է օժանդակեն գիտահետազոտական աշխատանքներին բոլոր հիմնական մշակաբույսերի, հատկապես եգիպտացորենի, մրգի ու բանջարեղենի համար ICM և IPM ստանդարտները սահմանելու, պեստիցիդների նվազագույն օգտագործումը խթանելու նպատակով: Բույսերի պաշտպանությունն առանձնահատուկ է՝ կախված բույսից և տարածաշրջանից: Հետևյալ հրահանգները «Մշակաբույսերի ինտեգրված կառավարման» ստանդարտների համար ստեղծում են հենք շրջակա միջավայրի պաշտպանության և ֆերմայի մակարդակով կայուն գյուղատնտեսության համար: Ազգային ղեկավար մարմինները, ֆերմաների գծով խորհրդատունները, գիտնականները և ֆերմերները պետք է մշակեն ստանդարտներ բոլոր հիմնական դաշտային մշակաբույսերի, խաղողի, մրգի ու բանջարեղենի համար: ICM ստանդարտները պետք է ունենան բույսերի քիմիական պաշտպանության պրակտիկայից խուսափելու կողմնորոշում:

ICM ստանդարտները մշակաբույսերի համար պետք է ներառեն՝

- հիմնական վնասատուների, հիվանդությունների, նրանց բնական գիշատիչների մանրամասն նկարագրությունը (կյանքի ցիկլը, հարիտուսը /արտաքին տեսքը/, ի հայտ գալու ժամանակը, նպաստավոր պայմանները)
- ախտորոշման հնարավորությունները հիմնական վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի համար՝ սպեցիֆիկ տվյալ տարածաշրջանի և բնական գիշատիչների համար /բաց գույնի թակարդներ, , դեղին թակարդներ, գունավոր սոսնձի թակարդներ և այլն/
- տնտեսության շեմային /սկզբնական/ արժեքները
- հնարավոր կանխարգելիչ միջոցառումները, հիմնական ռազմավարությունը /նվազեցրած քանակով պարարտացում, հերկում, ուշացած ցանք և այլն/
- վերահսկման կենսաբանական միջոցներ /օգտակար միջատների ներմուծում, կենսաբանական պեստիցիդների օգտագործում/
- վերահսկման քիմիական միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում
- կիրառման ժամանակը, հաճախականությունը և սարքավորումները
- հակազդեցության կառավարման միջոցներ:

ICM ստանդարտները պետք է մատչելի լինեն բոլոր ֆերմերների համար և պետք է կանոնավորապես թարմացվեն: Այդ ստանդարտների կատարումը կարող է նախապայման լինել ֆերմերներին դրամական հատկացումներ տալու համար:

## Ֆերմայի խորհրդատուի լիցենզիա

Ֆերմերների նման, ֆերմայի խորհրդատուները նույնական պետք է ունենան մինչև 3 տարի ժամկետով լիցենզիա: Լիցենզիա ստանալու համար պեստիցիդների և սարքավորումների անվտանգ կիրառման վերաբերյալ ուսուցումից բացի խորհրդատունները պետք է հաճախեն հատուկ դասընթացների ICM /IPM-ի, պեստիցիդների օգտագործման նվազեցման, կանխարգելման գործնական միջոցառումների թեմաներով: Ֆերմայի

խորհրդատուները պետք է կանոնավորապես թարմացնեն իրենց գիտելիքները լիցենզիան երկարաձգելու համար:

Եվրոպիության անդամ պետությունների համար ֆերմայի խորհրդատվական ծառայության ստեղծումը պարտադիր կլինի սկսած 2007 թ-ից:

## Պարարտամյութերի քիչ օգտագործմամբ և պեստիցիդներից ազատ հողագործության խթանումը

Ֆոնդերը պետք է դաշնան մատչելի

- Ֆերմերների համար, որպեսզի շրջպես դեպի օրգանական հողագործություն
- Ֆերմերների համար, որոնք հերկելի հողը վերածում են մշտական մարզագետնի, հատկապես շրջակա միջավայրի առումով զգայուն տարածքներում:

## 4.5. Ավանդականից դեպի օրգանական

Ավանդական հողագործության փոխարինումը /կոնվերսիան/ օրգանականով կիանգեցնի պեստիցիդների օգտագործման վտանգի ամենից շատ նվազեցնան: Օրգանական մշակաբույսերի մեծ մասն աճեցվում են առանց պեստիցիդների կիրառման, իսկ օրգանական հողագործության համար թույլատրված պեստիցիդները պատկանում են ամենաքիչ թունավոր նյութերին, որոնք օգտագործվում են գյուղատնտեսության մեջ: Պղնձի միացությունները բացառություն են կազմում, որովհետև դրանք թունավոր են ջրային օրգանիզմների համար և կրծատում են հողի կենսագանագանությունը, այդ պատճառով դրանց կիրառման չափաքանակը ներկայումս սահմանափակված է մինչև տարեկան 8կգ/հա:

Որոշ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, հատկապես Չեխիայի Հանրապետությունում, Սլովակիայում, Էստոնիայում և Հունգարիայում օրգանական արտադրություն իրականացնող տարածքները նույն կամ ավելի մեծ տոկոսային հարաբերություն են կազմում, ինչը որ նկատելի է շատ արևմտաեվրապական երկրներում: Լեհաստանի և Ուկրաինայի նման երկրներում օրգանական հողագործությամբ զբաղված գյուղատնտեսական հողատարածքը փոքր տոկոս է կազմում, բայց ընդհանուր տարածքի տեսակետից դրանք Եվրոպայի լավագույն 20-ի մեջ են: Բուլղարիայում և Խորվաթիայում օրգանական հողագործությունը դեռևս ոչ մի դեր չի խաղում:

Ներկայումս ագրոքիմիկատների չօգտագործումը, հետևաբար շատ ֆերմերների ցածր կախվածությունը դրանցից Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում մեծ հնարավորություն է ընձեռում օրգանական հողագործության անցնելու համար:

Աշխատանքային ավելի էժան ծախսերը նույնպես առավելություն է արևմտյան օրգանական արտադրության հետ մրցակցության մեջ:

Համարյա բոլոր անդամագրված երկրները լրիվ իրականացնում են օրգանական արտադրության վերաբերյալ որոշումները /կարգավորումները/, ստեղծված են հավաստագրման մարմիններ և պիտակներ: Եվրոպիության անդամագրված երկրներում կարելի է ակնկալել օրգանական սեկտորի հետագա աճ հաջորդ տարիներին՝ շնորհիվ ֆինանսական օժանդակության, հատկապես /RDR/ «Գյուղական զարգացման մասին որոշման» ֆոնդերից:

2004-2006թ.թ. 5,76 մլրդ Եվրո կիատկացվի նոր անդամ պետությունների զարգացման համար: Այդ գումարը պետք է օգտագործվի օրգանական սեկտորի ուժեղացման նպատակով:

RDR ֆոնդերը կարող են օգտագործվել որակյալ գյուղատնտեսական մթերքների մշակման/մարքեթինգի մեջ ներդրումներ կատարելու համար:

Սպառողներին բավարարելու համար որակյալ և լավ մշակված բազմազան սնունդը պետք է մատչելի լինի: Մննդի մշակման հարմարությունները պետք է հետևեն հիգիենիկ

ստանդարտներին սպառողների անվտանգությունը երաշխավորելու և գոհացնելու համար: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ֆերմերների մեծ մասը թարմ մթերք է վաճառում տեղական շուկաներին: Արտահանումը, բացառությամբ Հունգարիայի, երկրորդական դեր է խաղում: Արտաքին շուկաներ մուտք ունենալու համար կարիք կա մարքեթինգային հետազոտության, ապրանքի դիզայնի և նոր մշակող սարքավորումների: Տեղեկատվական կամպանիաներն անհրաժեշտ են տեղական շուկան կայունացնելու և ընդարձակելու համար:

Արտադրության առումով կարիք կա ավելի շատ ինֆորմացիայի և ուսուցման, շատ գյուղատնտեսական համալսարաններում չկան օրգանական հողագործության գծով դասընթացներ, պետական խորհրդատվական ծառայությունները հաճախ ի վիճակի չեն խորհրդատվություն ապահովել այն ֆերմերներին, ովքեր ցանկություն ունեն անցնելու օրգանական հողագործության:

## 5. Պահանջներ Եվրոմիության մակարդակով

Բրոյցուրի վերջին գլուխներում դիտարկվում են անհրաժեշտ փոփոխությունները ազգային քաղաքականություններում և այն պահանջներում, որ ազգային կառավարությունները պետք է իրականացնեն: Հասարակական կազմակերպությունները փոփոխությունների համար պետք է դիմեն Եվրոպակամենտին, Խորհրդին և Եվրոհանձնաժողովին:

Գոյություն ունի պեստիցիդների թույլատրության դեկավար հրահանգ, կան նաև պեստիցիդների մնացորդները կարգավորող դիրեկտիվներ, բայց մինչև հիմա չկա պեստիցիդների օգտագործումը կարգավորող դիրեկտիվ: Այս բացը լրացնելու համար Եվրոպայի «Պեստիցիդների դեմ գործողությունների ցանցը» /PAN/ 2002թ. առաջարկել է մի տեքստ այդպիսի դիրեկտիվի համար:

Այդ տեքստով Եվրոպայի վերոհիշյալ ցանցը խնդրում է Եվրոպական օրենսդրության համար պեստիցիդների կիրառումների հաճախականությունը 5 տարում նվազեցնել 25%-ով և 10 տարում՝ 50%-ով: Ավելի մանրամասն, PAN-ը խնդրում է Եվրոպական օրենսդրության մեջ ներառել հետևյալ կարևոր կետերը՝

- Բոլոր անդամ պետությունների համար պեստիցիդների կրծատման պարտադիր պլաններ իրենց նպատակային խնդիրներով, օգտագործման նվազեցման ժամանակացույցով և օրգանական հողագործության աճող տոկոսային հարաբերությամբ, ներառելով յուրաքանչյուր անդամ պետության համար պեստիցիդների օգտագործումը կրծատելու նպատակային խնդիրը, որը չափվում է ըստ պեստիցիդների մշակման հաճախականության խնդեքսի, ինչպես նաև օրգանական հողագործության համար ավելացող հողերի համար նպատակային խնդիրը 10 տարվա ընթացքում սկսած սահմանգծային տարուց
- Համայնքի մասշտաբով պարտադիր նպատակային խնդիրներ և ժամանակացույց պեստիցիդների օգտագործման նվազեցման հասնելու համար, որոնք սկզբնապես պետք է չափվեն ենթելով կիրառման հաճախականությունից
- Գործողությունների ազգային պլաններ, որոնք կնշեն, թե ինչպես պետք է յուրաքանչյուր անդամ պետություն հասնի պեստիցիդների օգտագործման պրոգրեսիվ կրծատումների՝ համաձայն դիրեկտիվում նշված նպատակային խնդիրների ու ժամանակացույցերի և, մասնավորապես, պետական դեկավար մարմինների հսկողության տակ գտնվող բոլոր տարածքների և գյուղատնտեսական նպատակների համար
- Ազգային ուսումնասիրություններ, որոնք կօգնեն որոշել վնասատուների վերահսկման նպատակով քիմիկատների օգտագործման կրծատման կամ դրանց չօգտագործման վերաբերյալ տարբեր ծրագրերի կատարման հեշտությունը և հետևանքները: Այդ ուսումնասիրությունները հիմք կծառայեն անդամ

պետությունների համար պարտադիր նպատակային խնդիրների իրականացման եղանակները որոշելու գործում:

- Եվրոմիության և ազգային մակարդակով միջոցառումներ՝ կրծատելու համար վնասատուների վերահսկման նպատակով օգտագործվող քիմիկատներից կախվածությունը, ներառյալ «Վնասատուների ինտեգրված կառավարման» պարտադիր կիրառումը ոչ-գյուղատնտեսական վնասատուների վերահսկողական իրավիճակների համար, ինչպես նաև «Մշակաբույսերի ինտեգրված կառավարման» կիրառումը մշակված բոլոր այն հողերի վրա, որտեղ դեռ չի կիրառվում օրգանական հողագործությունը: Միջոցառումները պետք է ընդգրկեն լայն ֆինանսական օժանդակությունը հետազոտության և վնասատուների վերահսկման պրակտիկայի ընդարձակման համար, որը նվազեցնում, և որտեղ հնարավոր է, վերացնում է պեստիցիդների օգտագործումը, ինչպես նաև միջոցառումներ օրգանական հողագործության և պարարտանյութերի քիչ օգտագործմամբ գյուղատնտեսության անցնելու համար
- «Վնասատուների ինտեգրված կառավարումը» և «Մշակաբույսերի ինտեգրված կառավարումը» /որոնց ստանդարտները պետք է մանրակրկիտ սահմանվեն յուրաքանչյուր անդամ պետության կողմից/ որպես նվազագույն պահանջ Եվրոմիության բոլոր ոչ-գյուղատնտեսական և գյուղատնտեսական պեստիցիդների օգտագործման համար: Մշակաբույսերի ինտեգրված կառավարման խաչաձև կատարումը պետք է պայման լինի «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության» սուբսիդիաների համար: Շատ հավանական է, որ Մշակաբույսերի ինտեգրված կառավարման համակարգերը նվազեցնեն պեստիցիդների տարալվացման դեպքերը և պեստիցիդների ազդեցությունները հողում, ունենան դրական ազդեցություն ոչ-մշակաբույսների տեսակների՝ ներառյալ մակրոֆաունայի, կենսազանազանության վրա: Եթե «Մշակաբույսերի ինտեգրված կառավարման» արդյունքում բերքի թերևակի կրծատում նկատվի, ապա կրծատված ծախսերն, այնուամենայնիվ, կարող են հանգեցնել ավելի բարձր շահութաբերության:
- «Գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականությունը» պետք է երաշխավորի, որ փոքր և միջին ֆերմերները, որոնք կրծատում են պեստիցիդների օգտագործումը, չեն ունենա եկամտի կորուստ: Վերոհիշյալ քաղաքականությունը պետք է նաև ավելի շատ օժանդակություն ապահովի ագրո-շրջակա միջավայրի միջոցառումների համար, հատկապես օրգանական հողագործության համար:
- Պեստիցիդների վերաբերյալ տեղեկատվությունից օգտվելու հնարավորություն, որն ընձեռում են դեկավար մարմինները ներառյալ այն տեղեկատվությունը, որը նպաստում է ձիշտ ժամանակին հատուկ կարգավորիչ որոշումներին հասարակության արձագանքը ստանալու համար
- Եվրոհանձնախմբի 91/414 դիրեկտիվի վերանայումը պետք է երաշխավորի, որ պեստիցիդների ակտիվ քաղադրանյութերը, ներառյալ կայուն, կենսաակումույատիվ, CMRs /վերարտադրողականության համար քաղցկեղածին, մուտագեն կամ թունավոր/ կամ EDs /էնտոկրին համակարգի քայլայիշներ/ քացարված են շուկա արտահանելու և օգտագործելու համար:
- Պեստիցիդները, որոնք դասակարգված են որպես խիստ վտանգավոր նյութեր ըստ Զրային կառուցների մասին դիրեկտիվի /2000/60/EC/ պետք է քացառվեն 91/414 դիրեկտիվի Հավելում 1-ից:
- Դիլերների և պեստիցիդների պրոֆեսիոնալ օգտագործողների՝ ներառյալ ֆերմերների, պարտադիր ուսուցում և հավաստագրում, համաձայն Եվրոհանձնական ստանդարտների

- Պարտադիր տեխնիկական պահանջներ և կանոնավոր ստուգումներ պեստիցիդների կիրառման նկատմամբ
- Սարքավորումներ և պահեստային շինություններ
- Համակարգված մոնիթորինգ և մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա պեստիցիդների օգտագործման ազդեցությունների վերաբերյալ տվյալների հավաքում, ներառյալ երկարատև հետազոտական ծրագրերը
- Կոռորդինացված համակարգեր պեստիցիդների արտադրության, ներմուծման, արտահանման, վաճառքի, բաշխման և օգտագործման համար, ներառյալ պարտադիր գրանցումները և պեստիցիդների օգտագործման մասին բոլոր հաշվետվությունները, որոնք պետք է ընդգրկեն յուրաքանչյուր բույսի համար օգտագործած քանակի մասին գեկույցները:
- Արգելվներ օդանավերով պեստիցիդների կիրառումների վրա և պեստիցիդի նկատմամբ խոցելի գոտիներում
- Տեղեկատվությունից օգտվելու հնարավորություն և հասարակության մասնակցություն պեստիցիդների վերաբերյալ որոշումներ կայացնելու գործում Եվրոպական և ազգային մակարդակով: